

ՆԵՐԿԱՅԱՅՆԵԼՈՎ ԻՐ ՑԱՆԿԸ

«ԱԶԳԱՅԻՆ ՇԱՄԱԽՈՒՄԻՆ» ՑԱՆԿԸ ԿԸ ԿԱՌՈՒՑԵ ԵՒ ՈՉ ԹԵ ԿԸ ԲԱԺԵ ՈՒ ԿԸ ԲԱՆԴԵ

ՅԱՅՏԱՐԱՐԵՅ ՍԱԼԱՍ

Երեկ, երեկոյեան ժամը 5:00ին երեսփոխան Թամամ Սալամ իր քննարկարար մեջ տուաւ մամլոյ ասուլիս մը, որուն ընթացքին յայտարարեց Պէյրութի երկրորդ ընտրաշրջանին համար իր գլխաւորած «Ազգային Համախոհութիւն» ցանկին առաջադրած թեկնածուները: Ցանկին մաս կը կազմեն երեսփոխան Թամամ Սալամ (սիւննի), Հայկապետ Միսաքեան Ճակապետի ներկայացուցիչ Միհրան Սեֆերեան (հայ առաքելական), Մոհամէտ Մաշնուք (սիւննի), Մոհամէտ Պրքժաւուրի (շիի) եւ Հայկապետի (փոքրամասնութիւններ):



Ներկայացուցիչները տեսարան մը:



Չախլեան աջ՝ Մ. Սեֆերեան, Մ. Պրքժաւուրի, Թ. Սալամ, Մ. Մաշնուք եւ Հ. Էֆրեմ: Լուսանկարները՝ Պ. ԶԱՐՈՒԿԵԱՆԻ

կոր Բագրատունի, Ստեփան Ապաճեան, տեղեկատու աղբիւրներու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ՝ երեսփոխան Թամամ Սալամի եւ անոր ցանկակիցներուն մեծ թիւով համակիրներ: Թամամ Սալամ ներկայացուց իր ցանկին որդեգրած քաղաքական ուղեգիծը «Ազգային Համախոհութիւն» ցանկը պիտի աշխատի իր հայրենակիցներուն համար պայծառ ապագայ վր կերտել: Ան, իր գլխաւորած ցանկին մասին արտայայտուեալ իր արձագանքները «Խումբ մը, որ ազգային նպատակները իրագործելու համար կը կառուցէ եւ ոչ թէ կը բաժնէ ու կը քանդէ»:

ԱՎԵԼՈՐԿ

ԱՆԽԱԽՏ ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ

Խորհրդարանական ընտրութիւնն սահմանուող իրաքանչիւր լիբանանցիի համար կրնայ տարբեր նշանակութիւն ունենայ, ըստ անհատին հետաքրքրութիւններուն եւ անոր համայնքային պատկանելիութեան: Մեկուն համար անիկա կրնայ նշանակել քաղաքական կեանքին անուղղակի մասնակցութիւն, միւսին՝ տնտեսական եւ ընկերային բարձր կեանք մը ապահովելու միջոց, ուրիշին համար ան կրնայ գոյտ եկամտի աղբիւր նկատուիլ, եւ այլն:

Հայութեան պարագային, անիկա ունի բոլորովին այլ բանաձեւում. «Լիբանանի գերագոյն շահերուն պաշտպանութիւնը» հայութեան բոլոր իրաւունքներուն պաշտպանութիւնն է հետապնդում:

Գրեթէ ամիս մը կը բաժնէ մեկ ընտրութիւններէն: Հայ քուէարկողը այսօր մայրաքաղաքի պարագային իր տրամադրութեան տակ ունի երկու ցանկ: Մեկը՝ միասնական, միւսը՝ միասնականութիւնը հարուածող, քայքայող, խարանդ:

Հայ քաղաքացին այսօր աւելի քան երբեք գիտէ, հաստատած է, որ միասնականութեան այլընտրանք չկայ. առ այդ, ան պիտի քուէարկէ ազգին՝ առաջադրած ցանկին, եւ ոչ՝ այլ հոսանքներու, խմբաւորումներու կամ անհատներու: Հայ համայնքը իր ազգային կուսակցութիւններով եւ իր յարանաւորութիւններով կը ներկայանայ ընտրութեան, իբրեւ մեկ ու անխախտ ամբողջութիւն: Հայ համայնքը ինք կ'որոշէ եւ կ'առաջադրէ իր թեկնածուները: Այլ ցանկերով ներկայացող հայանուն մարդիկ չեն կրնար համայնքին ներկայացուցիչը նկատուիլ, որովհետեւ միայն համայնքը կրնայ

ՀՐԱՉ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ
Շար. ք. էջ 10

AQUA SEVAN ՇԱՄԱԽՈՒՄԻՆ ԱՅՆԱՐԻ ՄԷՉ

ՎԱՐՉՈՒ DELUX ՇԱԼԱՆԵՐ (Շաբաթական կամ ամսական) ԼՄԱՆ Կահաւորուած (60, 90 եւ 100 քառ. մետր տարածութեամբ) Արդիական կառոյց, լողաւազան, գեղատեսիլ վայր, անձնական կառավարում:

Դիմել՝ հեռ. 03-714855 եւ 01-746972

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԶԵՄ

ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԵՅ ՉՈՒՍԱՐԵԱՆԸ

Անկախատու «ՏԵՂԻՍ ՍՅԱՐ» օրաթերթը երկու անգամ իր թիւով կը հաղորդէ, թէ երեսփոխան Թաք Չուխատարեան յայտարարած է, որ խորհրդարանական ընտրութիւններուն թեկնածու չէ:

Երեսփոխան Չուխատարեան ըսած է, որ ինք կ'ընդունի Հ. Յ. Դաշնակցութեան որոշումը, որովհետեւ ի վերջոյ Հ. Յ. Դ. գործադիր կանգնեցաւ իրեն, որպէսզի երեսփոխան դառնայ:

ՅԵՏՍ ԿՈՉԵԼՈՎ ԻՐ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ

ՆԱՃԱՐԵԱՆ ՉՈՐԱՎԻԳ ԿԸ ԿԱՆԳՆԻ ՀԱՅՎԱԿԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՃԱԿԱՏԻՆ

Պէյրութի Գ. ընտրաշրջանին մէջ Հայ կաթողիկէ աթոռին թեկնածու Նազար Նաճարեան յայտարարեց, որ յետոյ կը կոչէ իր թեկնածութիւնը՝ ընդունելով Հ. Յ. Դաշնակցութեան որոշումը:

Նազարեան իր համակիրներուն եւ ընտրական գրասենեակի աշխատակիցներուն հետ իր հանդիպումին ըսաւ, որ ինք խոստացած է ենթարկուիլ Հ. Յ. Դաշնակցութեան որոշումին այն պարագային, երբ կուսակցութիւնը գինք նկատի չունենայ իրրեւ թեկնածու Հայ կաթողիկէ աթոռին: Ան իր համակիրներուն կողմէն յայտարարեց, որ կանգնելու Հայկական Միասնականութեան ձեռնարկին, յատկապէս Պէյրութի Գ. ընտրաշրջանին մէջ:

ՉԵՉԷՆ ԸՄԲՈՍՆԵՐ ՌՈՒՍ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ ԿԸ ՍՊԱՆՆԵՆ

ՄՈՍԿՈՒԱ, 8 (ՌՈՑԹԸԸԸ)- Մոսկուա կը շարունակէ գոհեր տալ Չեչենիոյ մէջ, ուր երեքշաբթի օր 20 ոստիկան սպանուած է եւ ուրիշներ վիրաւորուած են:

«Իթար-Տաս» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ չեչեն ըմբոստները շրջանային մայրաքաղաք Կրոզնի արեւմուտքը գրտնուող անտառէ մը ուստական բանակային փոխադրականները մը վրայ կրակած են, սպանելով երկու ոստիկաններ եւ չորս ուրիշներ վիրաւորելով:

Այլ ղեկավար մը ընթացքին, Կրոզնի հարակից Բրուրներուն միացնող ճամբուն մը վրայ կանգնեց, որ շարունակէ գոհեր տալ մէջ, ուր երեքշաբթի օր 20 ոստիկան սպանուած է եւ ուրիշներ վիրաւորուած են:

Յարձակումները տեղի ունեցած են ամբողջ շրջանին մէջ արձանագրուած գէնքերու կրակոցներու գիշերէ մը ետք:

Մոսկուա կ'ըսէ, թէ ըմբոստները կը դիմեն հասարակական արարքներու» որովհետեւ անոնք թիւը մեծ համեմատութեամբ նուազած է 11 ամսուան պատերազմին ընթացքին:

Սակայն ըմբոստ չեչենները կը պնդեն, որ շատ լաւ վիճակի մէջ կը գրտնուին եւ ուստական ուժերուն դէմ, որոնք մեծամասնութեամբ երիտասարդ գինուորագրեայնները բաղկացած են, հոգեբանական ճակատամարտը կը յաղթեն:

Ըմբոստ ղեկավար Շամիլ Պասաեւ ինքընկէ ըմբոստներու ուստային վրայ յայտնած է, թէ Չեչենիոյ մէջ գրեթէ ամէն ամսուան ընթացքին կը յաղթեն:

Ըմբոստ ղեկավար Շամիլ Պասաեւ ինքընկէ ըմբոստներու ուստային վրայ յայտնած է, թէ Չեչենիոյ մէջ գրեթէ ամէն ամսուան ընթացքին կը յաղթեն:

Ըմբոստ ղեկավար Շամիլ Պասաեւ ինքընկէ ըմբոստներու ուստային վրայ յայտնած է, թէ Չեչենիոյ մէջ գրեթէ ամէն ամսուան ընթացքին կը յաղթեն:

Շար. ք. էջ 10

ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆԵԼԻ ԶԷ

Կ'ԸՍԷ ՂՈՒԿԱՍԵԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐԻՏ, 8 (ԱՐՄԷՆՓՐԷՄ) - Լեւնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Արկարի Ղուկասեան Եւրոպայի Քաղաքական Ուսումնասիրութիւններու կեդրոնի ներկայացուցիչներ, «Հարաւային Կովկասի Մէջ Կառնուութեան Ուխտի» հեղինակներ Մալքոյ Էմբրոսի եւ Նաթալի Թոշիի հետ վերջերս ունեցած հանդիպումին ընթացքին յայտնած էր, որ ուխտին բոլոր դրոյթները ընդունելի չեն Լեւնային Ղարաբաղի համար:

Մեկնարանելով այս յայտարարութիւնը ԼՂՀի նախագահի մամլոյ ծառայութեան պետ Եղորտը Աթաբեան յայտնեց, որ Մ. Էմբրոսի նախագահ Ղուկասեանին ներկայացուցած է հիմնական այն սկզբունքները, որոնք ապագային պէտք է հիմք հանդիսանան շրջանային յարաբերութիւններուն: Ան նշած է, որ այդ հայեցակարգի կարգ մը դրոյթներ կրնան հիմք հանդիսանալ Հարաւային Կովկասի պետութիւններու եւ պետական կազմաւորումներու երկխօսութեան համար՝ շրջանի ապագայի նկատմամբ ընդհանուր մտեցումներ մշակելու նպատակով:

Իր կարգին, Ա. Ղուկասեան նշած է, որ ուխտի նպատակները կ'ենթադրեն հանգամանորէն ուսումնասիրել ոչ միայն Հարաւային Կովկասի իւրաքանչեւ իրենց եւ իրողութիւնները, այլեւ՝ լուծման անհրաժեշտ եղանակները, որովհետեւ նոյնիսկ փաստաթուղթի հայեցակցութեամբ Ղուկասեան ըսած է, որ «եթէ ինքնակառավարում հասկացողութեան ետին փաստաթուղթի հեղինակները կ'ենթադրեն ինքնակառավարութիւն կամ նոյնիսկ ինքնակառավարութեան բարձրագոյն աստիճան, ապա զարաբաղեան կողմի համար նմանօրինակ մտեցում չի կրնար ընդունելի ըլլալ»:

ՀԱՂՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ. Մ. Ը. Մ. Ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնս վարչութիւնս մեծ հաճոյքով կու գայ հաղորդելու իր շարքերուն, համակիրներուն եւ յատկապէս իր ֆուրկայի խումբերուն մարտիկներուն, թէ Պուրճ Համուտի մէջ ֆուրկայի դաշտ մը ունենալու իր թափած ճիգերը ի վերջոյ արդիւնաւորուեցան:

Արդարեւ Շրջանային Վարչութիւնս իր նշանակման առաջին օրէն իսկ գիտակից՝ նման դաշտի մը յոյժ կարեւորութեան, սերտ գործակցութեան մէջ մտաւ Պուրճ Համուտի քաղաքապետութեան, տիարք Անթուան եւ Պուլուս Արիստերու եւ Չմմառեան Կաթողիկէ միաբանութեան հետ, որոնք սիրով տարամարտեցին իրենց սեփականութիւնը եղող հողաշէտերը, որոնք կը գտնուին Պուրճ Համուտի ֆուրկայի դաշտին մուտքին դիմաց:

Առ այդ, Շրջանային Վարչութիւնս առաջին հերթին իր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ տիարք Անթուան եւ Պուլուս Արիստերուն, որոնք սիրով ընդառաջեցին վարչութեանս խնդրանքին՝ վերոյիշեալ հողաշէտերին իրենց պատկանող մասը միութեանս տրամադրութեան տակ զննելով:

Նոյնքան խոր եւ ջերմ շնորհակալութիւն կը յայտնենք Չմմառեան Կաթողիկէ միաբանութեան:

Եւ վերջապէս Շրջանային Վարչութիւնս իր ջերմագին շնորհակալութիւնը կը յայտնէ նաեւ Պուրճ Համուտի քաղաքապետութեան, որ մասնակից պիտի դառնայ վերոյիշեալ հողաշէտերու յարաբանքի աշխատանքին, զանոնք ֆուրկայի յարմար դաշտի մը վերածելու համար:

Հ. Մ. Ը. Մ. Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հ.Յ.Դ. «Գ.ՆԺԳԵՀ» ԿՈՄԻՏԵ

Ընկերային Յանձնախումբ
ԸՆԹՐԻՔԻ ԵՐԵԿՈՅ

Մասնակցութեամբ սիրուած երգիչներ
ԿԱՐՈ ԿԱՊՈՒՏԱԿԵԱՆԻ, ՇԱԷ ՊԱՐՏԱՍԱՐԵԱՆԻ, ՍԻԼԿ ՏԵՄԻՐԵԱՆԻ, ԼԻԶԱ ԺԱՅՐՈՒՄԵԱՆԻ:

Ընկերակցութեամբ՝ ՍԵՂՈ ՊԱՐՏԱՍԱՐԵԱՆԻ եւ իր նուազախումբին

Տեղի կ'ունենայ Չալքայի Ս. Խաչ եկեղեցւոյ Չեղք Հարպոյեան վարժարանի շրջափակէն Գեղա, Ուրբաթ, 11 Օգոստոս 2000, երեկոյեան ժամը 9:00ԷՆ սկսեալ:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԱՊԱՇՏՈՒԿԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՈՒԺԸ ԿԸ ԸԱՍՏԱՏՈՒԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԱԾ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ՄԵՋ

ՆՇԱՐ «ՄԵՆՔ ՊԱՏԻ ՈՒՆԻՆՔ»

Երեսփոխանական մեծահարուստ թեկնածուներ կը փորձեն տարբեր միջոցներով ճնշել քաղաքացիներուն վրայ եւ նոյնիսկ զնել անոնց քուէները. այս նպատակով անոնք կը շահագործեն նաեւ բարեգործութիւնը, բան մը, որ կ'արժեպարէ թէ՛ առաջարկողը եւ թէ՛ ստացողը, իբրեւ մարդ եւ իբրեւ քաղաքացի:

Բայց, ապնուութիւնը կը ճառագայթէ եւ ի վերջոյ կը յաղթէ, վկայ՝ հետեւեալ երկու դէպքերը.

Երեկ, Երեքշաբթի մեծահարուստ «բարեգործ»ին գրասենեակէն կը հեռաձայնէն Պուրճ Համուտ բնակող հայ կնոջ մը, կը յիշեցնեն, որ իրեն օգնութիւն կատարուած է եւ կը պահանջէ քուէարկել իրենց ցանկին:

Հայ կինը կը պատասխանէ՝ «բարիք ընողը, դէմը հատուցում չի սպասեր. շնորհակալ ենք ձեր կատարած օգնութեան համար, բայց մենք պիտի քուէարկենք Դաշնակցութեան ցանկին»:

Երկուշաբթի օր Ֆանար բնակող ընտանիք մը կը ստանայ նմանօրինակ հեռաձայն մը նոյն գրասենեակէն. տանտիրինը կ'ըսէ. «Շնորհակալ ենք ձեր նուէրին համար, բայց, մենք արժանապատուութիւն ունինք. մենք պիտի քուէարկենք հայերու ցանկին»:

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆԱՔ՝ ՌԱՌԻՇԷԻ ՄԵՋ

Ռաուշէի մէջ Երկուշաբթի երեկոյեան կայացաւ Շաթիրա ընտանիքին կազմակերպած ընտրական հաւաքը, որուն ներկայ գտնուեցան վարչապետ Սեյիմ Հըսի գլխավորած «Ազգային Գործ» ցանկին մէջ առաջադրուած թեկնածուները, որոնց շարքին՝ Յակոբ Բագրատունի, Արթիւր Նազարեան, Ստեփան Ապաճեան, ինչպէս նաեւ՝ հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ երեսփոխան Սեպուհ Յովհաննէան (Մեթնի հայ առաքելական աթոռի թեկնածու):

Խօսք առնողներուն շարքին եղաւ Յակոբ Բագրատունի, որ ըսաւ, թէ միայն կալուածատէրեր եւ ընկերութիւններու սեփականատէրեր իրաւունք ունին իրենց թեկնածուները դնելու:

Բագրատունի յայտնեց, որ Հայկական Միասնական Նուէրեան Ճակատի թեկնածուները հայ քաղաքացիներուն թեկնածուներն են եւ կը ներկայացնեն հայ համայնքին բոլոր հատուածները:

ԱՐԱՄ Ա. ԸՆԴՈՒՆԵՅ ԴԵՍՊՈՒՆ ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆԸ

Լիրանանի մէջ Հայաստանի դեսպան Արամ Նաւասարդեան երկէջ այցելեց Անթիլիասի մայրավանք եւ ընդունուեցաւ Արամ Ա. կաթողիկոսին կողմէ:

Հանդիպումին քննարկուեցին առարկայ դարձան Արամ Ա. վեհափառի Իրան այցելութեան, Լիրանանի եւ Հայաստանի քաղաքական գործադրումներուն, ինչպէս նաեւ Հայաստան - Սփիւռք յարաբերութիւններուն կապուած հարցեր:

ՎԱՆԱՑ ՉԱՅՆ ՎԱՆԱՑ ՉԱՅՆ

ԱՄԵՆ ՕՐ ԿԵՍՕՐԷ ԱՈՒՃ ԺԱՄԸ 11:00ԻՆ ՈՒՆԿՆԴՐԵՅԷ

«ԸՆՏՐԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ» ՅԱՅՏԱԳԻՐԸ
Յայտագիրը կ'ընդգրկէ լիբանանեան մասնուէն քաղուած երեսփոխանական ընտրութիւններուն վերաբերեալ լուրեր, յօդուածներ, տեղեկութիւններ, ինչպէս նաեւ նոյն գիրքերը արծարծող հարցազրոյց մը:
● Հարցազրոյցին կրկնութիւնը՝ նոյն օրը ժամը 6:30ի լուրերն են:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Ժանէթ Պէրէճեան եւ դուստրը Փոլինա Տէր եւ տիկին Գեորգ Պէրէճեան
Տէր եւ տիկին Զեւոնջ Սարգիսեան եւ գաւակը
Տէր եւ տիկին Սարգիս Երկեցեան
Տիկին Մարիամ Գուլուստեան եւ գաւակուէք
Տիկին Հայկանուշ Մանուկեան եւ գաւակուէք
Տէր եւ տիկին Յովակիմ Բարսեղեան եւ գաւակուէք
Կէլոյեան ընտանիք
Արքուսեան ընտանիք
Եւ համայն ազգականներ կը գովեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր, մեծ հօր, աներոյ եւ հարազատին՝

ԼԵՒՈՆ ՊԵՐԷՃԵԱՆԻ (Ծննդ՝ 1929)

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 6 Օգոստոս 2000, երեկոյեան ժամը 10:00ին:

Թաղման արարողութիւնը կատարուեցաւ, Երկուշաբթի 7 Օգոստոս, Կէսօրէ ետք ժամը 3:00ին, Նոր Միսի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

● Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ:
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, այսօր՝ Զորքշաբթի 9 եւ Հիմզաբթի 10 Օգոստոսին:

Փոխ վարչապետ, ներքին գործոց նախարար Միշէյ Մրր երկէջ հրապարակեց իր անձնական կողմէն իրականացուած ազատական միացեալ ուժին՝ բանակային գինուորներ եւ ներքին ապահովութեան ուժերու անդամներ, հարաւի մէջ տարածուելու հրամանագիրը:

Ներքին գործոց նախարարութեան հաւաստիադրուներ յայտնեցին, որ ապահովական ուժին տարածման ժամկէտը ճշգրտած է Չորքշաբթի առաւօտեան ժամը 3:00ին (այսօր):

Ֆինիլի ուժերու բանբեր Թիմուր Կէօքսէլ երկէջ իրանական իշխանութիւններուն պաշտօնապէս փոխանցեց, որ ՄԱԿի խաղաղարար ուժերու հարաւի մէջ տարածման աշխատանքներուն առաջին հանգրուանը աւարտած է:

Կէօքսէլ ըսաւ, որ յառաջիկայ օրերուն ՄԱԿի խաղաղարար ուժերը յաւելեալ 11 նոր զորքերու վրայ պիտի հաստատուին:

Ներքին գործոց նախարարին որոշումը պաշտօնապէս փոխանցուեցաւ հանրապետութեան նախագահութեան ընդհանուր տնօրէնութեան, նախարարաց խորհուրդի ընդհանուր քարտուղարութեան, պաշտպանութեան նախարարութեան, բանակի, ներքին ապահովութեան ուժերու, պետութեան ապահովութեան ուժերու հրամանատարութիւններուն, հարաւի եւ Նապաթիլի նահանգապետներուն:

Միւս կողմէ, ՄԱԿի խաղաղարար ուժերու մօտիկ աղբիւրներ հաղորդեցին, որ յառաջիկայ օրերուն բանակի եւ Ֆինիլի հրամանատարական կազմերուն միջեւ պիտի գումարին աշխատանքային ժողովներ, որոնց ընթացքին պիտի քննարկուին ՄԱԿի ուժերուն տարածման առնչուող հարցեր: Այս ժողովներուն առաջինը պիտի կայանայ այսօր՝ Չորքշաբթի, Եարզիլ մէջ:

ՄԱԿ ՄՏԱՀՈՒԳՈՒԹԻՒՆ ԿՐ ՅԱՅՏՆԷ

ՄԱԿ երկէջ մտահոգութիւն յայտնեց Լիրանան - Իսրայէլ սահմանին վրայ արձանագրուող ապահովական դէպքերուն գծով եւ իրանական իշխանութիւններուն կողմէն իր անաջողութիւնը որ առաջըր առնեն իսրայէլացի գինուորներու քարկոծման դէպքերուն իրանանքի առնելու համար:

Կ՝ՈՒՋՈՒԻ

● Երկաթեղնի հաստատութեան մը համար, 15Գ 22 տարեկան երիտասարդ մը: Հեռ. 01-487081, Երեկոյեան ժամը 8:00Ը ետք:

ԾԱԽՈՒ ՅԱՐԿԱՐԱԺԻՆ

● Չալքա, RELAX շէք, 8րդ յարկ: 190 քառ. մէք: Հեռ. 03 - 218822 եւ 03 - 882888:

ԾԱՌՈՒ ՅԱՐԿԱՐԱԺԻՆ

● Չալքա, Ս. Խաչ եկեղեցւոյ մօտ, 1 սենեակ եւ հիւրարարհ, 4րդ յարկ: Հեռ. 03-305782:

ԾԱԽՈՒ ՅԱՐԿԱՐԱԺԻՆ

● Տորա, 2 Գնչաւեանկ, Բիւրաքահ եւ յարակից մասեր, 3րդ յարկ: Հեռ. 03 - 857115:

ՎԱՐՉՈՒ ԲՆԱԿԱՐԱՆ

● Պուրճ Համուտ, Քաղաքային երկաթուղի շէքեր: Հեռ. 03-648916:

ցի երիտասարդներու կողմէ:

Իր կարգին, Իսրայէլի պաշտպանութեան փոխ նախարար Էֆրայիմ Սընէհ յայտնեց, որ ՄԱԿ ոչինչ կ'ընէ Լիրանան - Իսրայէլ սահմանին վրայ իրանանքի երիտասարդներու կողմէ արձանագրուող վայրագութիւններուն առաջըր առնելու համար:

ՆԱԽԱՐԱՐ ՆԱԶԱՐԵԱՆ ԱՅՅԵԼԵՅ ՍՈՒՐԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ



Նախարար Նազարեան Սուրիոյ վարչապետին հետ:

Ջրօսաչընութեան եւ կենսոլորտի նախարար Արթիւր Նազարեան Երկուշաբթի օր այցելեց Դամասկոս, պատմականութեան մը ընկերակցութեամբ, ընդառաջելով Սուրիոյ զրօսաչընութեան նախարար Քասէմ Միքտատի հրահրին:

Նախարարներ Նազարեանի եւ Միքտատի ներկայութեամբ, Լիրանան - Սուրիա զրօսաչընային հարցերու միացեալ յանձնախումբը գումարեց իր ժողովը, որուն ներկայ գտնուեցաւ նաեւ Լիրանան - Սուրիա գերագոյն խորհուրդի ընդհանուր քարտուղար Նասրի Նուրի:

Օրակարգի հարցերը քննարկելէ ետք, միացեալ յանձնախումբը որոշեց ստեղծել համակարգումի յանձնախումբը զրօսաչընային գործակալութիւնը գարգացնելու հեռանկարով: Երկու նախարարներուն մէջ շարաթ պայմանաժամ տրուեցաւ յանձնախումբերուն անդամները նշանակելու համար:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՎԱՐՉԱՊԵՏ ՄԵՐՈՅ

Սուրիոյ զրօսաչընութեան նախարարին ընկերակցութեամբ, նախարար Նազարեան այցելեց Սուրիոյ վարչապետ Պոլատ Մուսաֆա Միքտատի: Քննարկուեցան զրօսաչընային հարցերու միացեալ յանձնախումբին ժողովին արձանագրուած հարցերը:

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՀՐԱԻԷՐ

ՏԻԿԻՆ ՉԱՊԷԼ ԷՄԵԼԵՃԵԱՆ ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՍՈՒՐԱՏ ԳԱԲԼԱՆԵԱՆ
Աիրով կը հրաւիրեն իրենց հարազատներն ու բարեկամները ներկայ գտնուելու իրենց որդւոյն եւ դստեր՝

ՎԻԳԷՆԻ ԵՒ ՆԱՆՈՐԻ

Սուրբ Պակի Խորհուրդին, Ուրբաթ, 11 Օգոստոս, 2000 Երեկոյեան ժամը 7:00ին
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաք. Եկեղեցւոյ մէջ Սան Ֆրանցիսքո, Զալիֆորնիա

Կնքահայրութեամբ ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԿԱՐԷՆ ԷՔՄԷՃԵԱՆԻ

ԼԱԲԱՌՆ ԱՊԱԳԱՅԻ ՄԸ ԸԱՍԱՐ... ԼԱԲԱՌՆ ՃԱՄԲԱՆ

ՓՕԼԻԿԼՕԹ ԱՐՈՒԵՍԻՅ ԲԱՐՁՐ. ՎԱՐՃԱՐԱՆ

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ ԲՈԼՈՐ ԳՈՐԾԱՏԵՐԵՐՈՒՄ Զեր գործերը վստահեցը POLYGLOT բարձրագոյն վարժարանի մէջ մասնագիտացած մեր շրջանաւարտներուն:

POLYGLOT SCHOOL EMPLOYMENT OFFICE

Բոլոր այն շրջանաւարտները, որոնք ցարդ անգործ են թող դիմէ՛ք POLYGLOT EMPLOYMENT OFFICE

al-mashrek INSURANCE & REINSURANCE S.A.L.

Պուրճ Համուտի մասնաճիւղի հեռաձայնի թիւերն են. (01)258228 – (01)268808 Fax: (01) 258223

ՏՕՆ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ԵՒ ՈՒՆԻՏԻ ՕՐ ՊԻՔՏԱՅԱՅԻ

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս, Ս. Աստուածածնայ վերափոխման օմնի առիթով, յատուկ տօնախմբութեամբ պիտի նշուի ՊիքՏայայի Ս. Մատրան Ուխտի օրը հետեւեալ կարգով.

ՈՒՐԲԱԹ, 11 ՕԳՈՍՏՈՍ
- Երեկոյեան ժամը 5:00ին ժամերգութիւն:
- Ժամը 8:00Ը 8:30 այցելութիւն վեհափառ հօր եւ աջահմրոյ:
- Ժամը 9:00ին մշակութային ձեռնարկ, մասնակցութեամբ Համազգայինի ԶՆԱՐ պարափունքին, տեղի պիտի ունենայ դարձվածքի շրջափակէն ներս, ՊիքՏայայ: Ձեռնարկի աւարտին պատեր տրամադրելի պիտի ըլլան ժողովուրդը վերադարձնելու Պէյրութ:

ԳԻՐՇ. Տ. ՆԱԹԱՆ ԵՊՍ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ (Ուրբաթի խաչի)

ԳԻՐՇԱՅԻՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ ԺԱՄԵՐ 6:00ԻՆ:
- Սուրբ եւ Ամեն պատարագ ժամը 8:00ին:
Պիտի պատարագ եւ քարոզ:

ԳԵՐՇ. Տ. ՆԱԹԱՆ ԵՊՍ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ (Ուրբաթի խաչի)

Արարողութեանց պիտի հանդիսապետ եւ հատուցեալներուն իր հայրապետական մարտնչող պիտի փոխանցէ՝

Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵՇՈՒ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Յաւարտ Սուրբ եւ ամենա պատարագի պիտի կատարուի խաղողի եւ մատաղի օրհնութիւն:
Կը խնդրենք հաւատացեալ մեր ժողովուրդէն, որպէսզի խունդեան ներկայ գտնուին հոգեպարար արարողութիւններուն:

Դիւրացնելու համար հաւատացեալ ժողովուրդի դէպի ՊիքՏայայ երթն ու դարձը, յատուկ պատեր ձածայ պիտի լլկեն հետեւեալ վայրերն:

Ուրբաթ, ժամը 5:00ին

Ա. Աստուածածին Եկեղեցւոյ մօտէն
Ա. Վարդանանց Եկեղեցւոյ մօտէն
Պողոս Արիս թաղ, Քահիլ մօտ
Ս. Յակոբ Եկեղեցւոյ մօտէն
Ս. Զ. Մանկանց թաղ, Սենթր Պլանք-Էն:

Շարաթ ժամը 4:00ին
Նոյն վայրերն: ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ԼՕՍԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԼՕՍԻ բոլոր մասնաճիւղերու վարչութիւններուն եւ անդամուհիներուն.
Սիրելի՛ ընկերուհիներ,
ԼՕՍԻ բոլոր շրջաններու վարչութիւններն ու անդամուհիները կը հրաւիրենք հաւաքի մը, որ տեղի պիտի ունենայ Հիմզաբթի, 10 Օգոստոս 2000ին, կէսօր առաջ ժամը 11:00ին Յակոբ Տէր Մելքոնեան քառասրահին մէջ:
Կարեւորութեամբ կը յանձնարարենք, որ խունդեամբ ներկայ գտնուիք այս հաւաքին:
ԼՕՍԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՎԱՆԱՑ ՉԱՅՆ ՎԱՆԱՑ ՉԱՅՆ

F ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ՕՐՈՒԱՆ Մ ՅԱՅՏԱԳԻՐԸ

- 9 6:30 - Բացում
- 4 6:35 - Բարի լոյս
- 7 7:00 - Հայկական եւ օտար մեղմ երգեր
- 7 8:00 - Օրուան յայտագրի ընթերցում
- 8:15 - Տեղական մամուլի խորագիրներու ընթերցում
- M 8:30 - Հայերէն լուրեր
- h 8:40 - Օղերեւոյթ
- Z 8:45 - Ինչ կ'ըսեն աստղերը
- 9:00 - Հայկական խառն երգեր
- hեռ. 9:30 - Թոյլք
- 2 10:00 - Սակարան
- 4 10:30 - Արաբերէն լուրեր
- 1 10:45 - Արաբերէն երգեր
- 2 11:00 - Ընտրական քրոնիկ
- 7 12:00 - Ծախանդուխտի հետ
- 2 12:15 - Երաժշտութիւն
- 2 12:30 - Հայերէն լուրեր
- 13:00 - Սակարան
- 13:05 - Այգային յեղափոխական երգեր
- 14:30 - Արաբերէն լուրեր
- 2 15:00 - Արաբերէն յայտագիր
- 4 16:30 - Արաբերէն լուրեր
- 4 16:40 - Հանդիպում
- 1 18:00 - Beatlesh պատմութիւն
- 1 18:30 - Հայերէն լուրեր
- 9 20:30 - Էսթրատային
- 9 22:30 - Պատուեր
- 00:30 - Փակում

ՀԵՎԻ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՄՕՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՀԱՄԸՆԿՆԻՆ

Հայաստանի ժողովրդական կուսակցության և Ազգային Միասնական կուսակցության ղեկավարները՝ Ստեփան Դեմիրճեան և Արտաշէս Գեղամեան 7 Օգոստոսին ունեցան հանդիպում մը, որուն ընթացքին նշեցին, թէ Հայրենի ժողովուրդին համար կենսական նշանակություն ունեցող շարք մը սկզբունքային հարցերու մէջ երկու կուսակցությունները ունին համընկնող և փոխըմբռնող մտեցումներ:

Երկու կուսակցություններուն լրատուական ծառայություններուն տարածած հաղորդագրություններում համաձայն, հանդիպման ընթացքին միտքեր փոխանակուած են Հայաստանի քաղաքական, տնտեսական և ընկերային ներկայ իրավիճակին վերաբերելով, կարելու չկատուած է Հայաստանի ազգային մտահոգ այլ քաղաքական ուժերու հետ համագործակցությունը եւ որոշուած է պարբերաբար նման հանդիպումներ կազմակերպել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ Կ'ԸՆԳՈՒՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԳ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ

7 Օգոստոսին Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեան ընդունեց Հայաստանի Գիտություններու Ազգային Ակադեմիայի երիտասարդ գիտաշխատողներու համակարգման կոմիտեի անդամներին:

Հանդիպման մասնակիցները վարչապետին ներկայացրին Հայաստանի մէջ գիտութեան կացութեան մասին իրենց տեսակետները եւ այն միջոցառումները, զորս երիտասարդ գիտնականները, նախաձեռնած են գիտութեան զարգացման իրենց նպատակներով:

Վարչապետ Մարգարեան նշած է, որ ներկայացուած խնդիրներէն շատերը ծանօթ են իրեն, իսկ ոմանց ուղղութեամբ արդէն իսկ աշխատանքներ կը տարուին:

Մասնաւորապէս ընթացքի մէջ են Ծաղկաձորի մէջ երիտասարդական ճամբարի եւ Երեւանի մէջ ուսանողական ակումբի ստեղծման աշխատանքները: Կառավարութեան համաձայնեցումով արժանացած է երկար սպասուած «Գիտություն եւ արհեստագիտական քաղաքականութեան մասին» օրէնքի նախագիծը, որ լուծում մը կու տայ գոյութիւն ունեցող շարք մը հարցերու:

Վարչապետը կարեւոր նկատած է երիտասարդ գիտնականներու եւ գործարար շրջանակներու գործակցութեան խորացումն, ինչպէս նաեւ՝ միջազգային գիտական եւ տնտեսական գործընթացներուն համար կու տան անհրաժեշտութիւնը:

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ Կ'ՕՍԷՎԱՅԻՆ Ա. ՏՐԳԱՏ ԵԿԵՂԵՑԻՆ

6 Օգոստոսին Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոս ժամանեց Վայոց Ձոր՝ Վայքի Ա. Տրդատ նորակառոյց եկեղեցւոյ բացումն ու օծումը կատարելու համար:

Կաթողիկոսը եկեղեցւոյ դարպասներուն առջեւ Հայրենիքի Բ. կաթողիկոսին դէպի եկեղեցի ուղեկցեցան Սիւնեաց թեմի առաջնորդ Արարիկ Եպս. Մկրտչեանն ու թեմի հոգեւորականը զարք: Այնուհետեւ վեհափառի համահասպետութեամբ կատարուեցաւ եկեղեցւոյ օծման արարողութիւնը: Օրումս պատարագիչ էր Ներսէս արք. Պոզապայեան:

Պատարագէն ետք քարոզեց Գարեգին Բ. կաթողիկոս՝ յորդորելով նաեւ հաւատարիմ մնալ մեր հայրենուն հաւատքին, հոգեւոր արժեքներուն եւ պատմութեան:

Տակաւին 1999 թուականին եկեղեցւոյ կառոյցումը նախաձեռնած էր երջանկալիշատակ Վազգէն Ա. կաթողիկոսը: Սակայն ֆինանսական դժուարութիւններու պատճառով ընդհատուած շինարարական աշխատանքները վերսկսան միայն երկու տարի առաջ՝ շնորհիւ ամերիկահայ Գալուստ եւ Լ.մմա Սողոմեաններու, որոնք ակազալուր մ'էտրոպ արք. Աշտենակ եւ Սիւնեաց թեմի առաջնորդ Արարիկ Եպս. Մկրտչեանի յորդորներուն՝ յաճմ առին եկեղեցւոյ շինարարութեան ամբողջ ծախսերը:

Բարերարները հոգացած էին ոչ միայն շինարարութեան բոլոր ծախսերը, այլ նաեւ եկեղեցւոյ օծման առիթով նուիրած էին անհրաժեշտ զոյք՝ քահանայական զգեստներ եւ եկեղեցական իրքեր:

Եկեղեցւոյ օծման առիթով շնորհատրամբի խօսքեր արտասանեցին Սիւնեաց թեմի առաջնորդ Արարիկ Եպս. Մկրտչեան, Մկրտչեան, Մկրտչեան արք. Աշտենակ եւ Վայոց Ձորի մարզպետ Պանոսյան Մանուկեան:

Օծման արարողութեան կը մասնակցէին Արմատի, Արցախի, Ծիրակի եւ Արագածոտնի թեմերու առաջնորդները:

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազգակ» մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէ կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթացիկ գիրով (հաստատութեան պարագային՝ նախընտրաբար պաշտօնակա թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազգակ» ծանուցումներու գրասենեակը:

ՏՐԱՄԱԳՐՈՒՄԸ ՅՈՐԵՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԻՆ ՄԷՎ ՄԱՍԸ

Ինչպէս նախապէս հաղորդած էինք, Միացեալ Նահանգներու եւ Հայաստանի կառավարութիւններու միջեւ Ուաշինգթոնի մէջ կնքուած պայմանագիրին համաձայն, ընթացիկ տարւած ընթացքին Միացեալ Նահանգներու 60 հազար թոն ցորեն պիտի տրամադրեն Հայաստանին:

Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպալատումը յայտնեց, որ այդ ցորենը յայտատու պիտի առաքուի երկու փուլով, 30 կոնտէյնէր - Նոյեմբեր, 30 կոնտէյնէր - Դեկտեմբեր, իւրեւնդ ընթացքին, արաքանջիւր անգամ 30 հազար թոն: Ցորենը պիտի վաճառուի բաց աճուրդով, շուկայական մրցակցային գիւնով, զոր պիտի սահմանւածուի ընդհանուր կազմակերպելու նպատակով Հայաստանի կառավարութեան յառաջացուցած յատուկ յանձնարարութեամբ:

Ըստ Միացեալ Նահանգներու դեսպալատում, պիտի տրուի 2000 ֆինանսական տարուան Միացեալ Նահանգներու կառավարութեան կողմէ Հայաստանին տրամադրուող օգնութեան մէկ մասն է:

ՀՐԱՅՐ ԲԱԶԷ ԽԱՉԵՐԵԱՆԻ ՅՈՒՅԱՆԱՆ ԴԷՍԸ

30 Յունիսին Հոլիվուտի «Սոդանայեան» սրահին մէջ տեղի ունեցած է Հրայր Բազէ Խաչերեանի ցուցահանդէսին բացմանը:

Ցուցադրուած է վաճառուած են աշխարհի կանգնած վայրերուն մէջ Խաչերեանի հայկական մշակութային կոթողներու, եկեղեցիներու եւ վանքերու լուսանկարները:

ԿԻՊՐԱՆԱՅ ԿԵԱՆԸ «ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՄԱԴ ՊԱՏԱՐԱԳ» ԳՐԸՈՅԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Կիպրոսի թեմի 1700 ամենակի յանձնարարները հրատարակած է «Սուրբ Եւ Անմահ Պատարագ» գրքովը, որ կը պարունակէ Հայաստանացի Առաքելական եկեղեցւոյ պատարագը գրաբարով եւ աշխարհաբարով:

Ժամագիրքին առաջին էջերուն մէջ ցուցնուցներ տրուած են հաւատացեալներուն արարողութիւններու ընթացքին իրենց կեցումը մասին:

Պատարագը լման տրուած է իւրաքանչիւր հանգրուանի բացատրութիւններով եւ ցուցնուցներով:

Պատարագի բաժինի վերջապահութեան կան նաեւ յաւելուածներ հոգեւանգստեան պաշտօնի եւ հաւաքական խոստովանութեան ամփոփ բացատրական մը, ինչպէս նաեւ եկեղեցական զգեստներու եւ սպասներու նկարագրող ուղեցոյց մը:

ԱՐՄԻՆ ՎԵԿՆԸՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՑՈՒՅԱՅԱՆԴԵՍ

Վերջերս տեղի ունեցած է Արմին Վեկնըրի Հայկական Յեղասպանութեան լուսանկարներուն ցուցահանդէսին բացումը:

Չեմարկը կազմակերպած է Համազգայինի Կիպրոսի «Չախկան» մասնաճիւղը, ինչպէս նաեւ արարողութեամբ Կիպրոսի մշակութի նախարար Արարիկ Սիւնեանի հաւանքով:

Ցուցահանդէսը ընթացքին տեղի ունեցած է նաեւ դասախոսութիւններով Արմին Վեկնըրի կեանքին ու գործին մասին: Դասախոսն էր անգլիացի փրոֆ. Մարթին Ռուհի, որ յատկապէս Պրեմէն քաղաքէն իրաւորուած է:

ՖՐԱՆՍԱԸԱՅ ԿԵԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ «ԱՐԱՐԱՍ»Ը ԿԸ ՄԱՆԱԿՅԻ ԱՇԽԱՐՀԻ ՖՈՒԼԵՆՈՐԱՅԻՆ 11ԴԴ ՓԱՌԱՏՕՆԻՆ

8 Յունիսին հիւսիսային Ֆրանսայի Պրե-Տիւն քաղաքին մէջ բացուելը կատարուած է Աշխարհի Ֆուլորայի 11րդ փառատօնին:

Միջազգային երաժշտական փառատօնին մասնակցած են աշխարհի տարբեր երկրներու 12 ինքնագործ երաժշտական խումբեր: Հայաստանը ներկայացուցած է «Արարատ» պարախումբը:

Փառատօնին բացման արարողութեան ներկայ գտնուած է Հայաստանի դեսպան Էդուարդ Նալպանտեանը:

Պրե-Տիւն քաղաքային Էլ Օտ Մարթէլ հանդիպումի մը ընթացքին ընդգծած է մշակութային երկրորդ մասի յարաբերութիւններուն գարգացման կարեւորութիւնը:

Երաժշտական փառատօնը անարտած է 15 Յունիսին, որմէ ետք «Արարատ» խումբը ելուցներ պիտի ունենայ երկրակայան այլ երկիրներու մէջ:

ԳԻՒՍՐԻԷՆ ԽՈՒՍԲ ՄԸ ՀԱՅ ԳՊՐՈՅԱԿԱՆՆԵՐ՝ ԿՐԸՆՈՊԼԻ ՄԷՋ

Վերջերս Հայաստանի մէջ Ֆրանսայի դեսպանին նախաձեռնութեամբ Գիւսրիէն խումբ մը հայ դպրոցականներ իրենց դաստիարակներով այցելած են Ֆրանսայի Կրմուրի քաղաքը:

Հայաստանի աշակերտները 3 շաբաթ մնացած են Ֆրանսայի մէջ եւ փաստի իրենց կրթնային քաղաքային տարրերուն մէջ ընդունելութիւն մը կազմակերպուած է:

Հիւրերը ունեցած են զանազան հանդիպումներ եւ այցելած են տեսարժան վայրեր:

ԱՐՑԱԽԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՅ ԱՍՊԵՏՈՒՎԻՆԵՐԸ

Երբ սկսուեց Արցախի ազգային-ազատագրական պայքարը, քաջարի հայկազուն երիտասարդութեան կողքին կանգնեցին եւ արխախտ հայուհիները: Արցախեան դաժան մարտերին մասնակցել եւ հարիւրից աւելի անձնուրաց հայուհիներ:

Մայրաքաղաքում տեղի ունեցող է հայ ազատամարտիկներին փառքի թանգարան, որտեղ ներկայացուած են քաջարի կանանց մասին պատմող արժեքաւոր նկարներ: 1996 թուից Երեւանում գործում է նաեւ արցախեան պատերազմի մասնակց կանանց հասարակական կազմակերպութիւն, որի հիմնադիրն է ազատամարտիկ Այտա Սերոբեանը:

1996 թուականին հիմնադրուած այս կազմակերպութիւնը ընդարձակ ուսումնասիրութիւններ է կատարում, հետաքրքրում Հայաստանից Արցախ մեկնած անձնուրաց եւ քաջարի կանանց հակառակորդ: Զինուոր հայուհիներին 17 լուսն չգործածելով, զոհուեցին: Ամենակրտսէրը 19 տարեկան էր Եղեգնաձորցի, իսկ ամենաազգը՝ 40 տարեկան՝ Գեղարքունիքի մարզի Զոյաքար գիւղից:

Նրանցից երեքը թալուած են Եւրոպայում, իսկ միւսները հանգչում են իրենց ծննդավայրերում, հարազատների կողքին: Վարդենիսի լեռների գրկում ծուրարած Խաչադիր գիւղում՝ 1956 թուականին ծնուած Կարինէ Գեորգեանը գիւղի միջնակարգ դպրոցն աւարտելուց յետոյ աւարտեց նաեւ Երեւանի Փոլիտեքնիկը հիմնարկի քիմիական բաժնումը, աշխատեց քիմիկոս: «Նախընտր» գործարանում՝ որպէս վարպետ: 1992 թուականին նա կամուտը մեկնեց Արցախ, ուղի մտնելով: Կոտեճ անտառներում նա եւ բուժքույր էր, եւ մարտիկ: Կոտեճ տարբեր ուղիներով տեղափոխուած են հերոսաբար զոհուեց: Թաղուած է հայրենի գիւղում: 1970 թուականին Երեւանում է ծնուել Նաիրա Սահակեանը: 1990 թուականին աւարտել է Երեւանի քիմիական ուսումնարանը: Երբ եկաւ պահը, Նաիրան դժուարին վիճակ կայրեց: Նա իր գաւակներին՝ տղային եւ աղջկան, թողեց ծնողներին հոգատար խնամքին եւ մեկնեց Արցախ՝ պատերազմի դաշտ: Քսանթրեքամեայ բուժքույրն իր իրաւունքները նուազեց մարտիկների սերն ու համակրանքը, եւ քանի որ չէկ միակեր ունէր, նրան քննաքննելով «Երկիր կառուէ» էին ասում:

Նաիրան եղաւ հակառակորդ տարբեր գծերում, մասնակցեց Մուշիկի ազատագրմանը, մեկնեց Մարտակերտ: Այստեղ էլ ջրամբարի ազատագրման յամառ մարտերում շրջափակման մէջ ընկաւ եւ զոհուեց:

Այսօր մեր կողքին է ապրում Այտա Սերոբեանը: Նա արժանացել է Հայաստանի «Մարտական ծառայութեան», «Մայրական երախտագիտութիւն Արցախի քաջորդիներին» եւ «1992-1994 թուականներին Արցախի մարտական գործողութիւններին մասնակցից» մե-

տալների:

Երեք երեխաների մայր էր Այտան, երբ սկսուեց Արցախի ազգային-ազատագրական պայքարը: Որպէս հայրենիքի անձնուրաց նուիրեալ նա չկարողացաւ անտարբեր մնալ ազատարար կանչերին ու տանը հանգչիւտ նստել: 1992 թուականի պատերազմի ամենաթէթ օրերն էին: Երեւանի Աւան քաղաքում իւր 12 դարմանատան Այտան աւագ բուժքույր, որը շեշտ երեք երեխաներին յանձնել ծնողներին խնամքին եւ կամուտը անդամագրուել Երկրապահների շուկային: Պատերազմի դաշտում Այտան շատ ծանր ապրումներ ունեցաւ, տեսնելով հարիւրաւոր վիրաւորներին, զգալով նրանց տառապանքները: Արցախում, դարձաւ հաստատակամ, սփոփուեց իր արքայի բարձր գիտակցութեամբ ու պատասխանատուութեամբ: Այտան շատերի կեանքը փրկեց, սուլեցանի դրեց նրանց վերքերին, դարձաւ բոլորի հարազատը, պաշտելի քույրն ու խնամակալը: Մատ զինուորներ ապաքինուեցին ու վերագործուեցին մարտի դաշտ:

Երբ 1994 թուականին հրադադար յայտարարուեց, Այտան տուն վերադարձաւ: Նա այսօր զբաղուած է հասարակական աշխուժ գործունէութեամբ:

Ամսօրաց է նաեւ բուժքույր Անահիտ Վարդանեանի նուիրումը Արցախի պաշտպանութեան գործին:

Նա մասնակցեց Երասխանի կողմին, ապա եղաւ Մարտակերտում, Լաչինում, Ստեփանակերտում ու Վաղուհասում, շատ շատերին է օգնել, ծանր վիրաւորների փրկել՝ առաջին օգնութիւն ցույց տալով: Այսօր էլ հայտն է, որ իր մասնակցութիւնն է ունեցել ազատագրական պայքարին:

Բուժքույր Անահիտ Գրիգորեանը ծնուել է զինուորի ընտանիքում, Վրաստանի Ախալքալաքի շրջանում: Այնուհետեւ աւարտել է Երեւանի բժշկական ուսումնարանը: Ամուսնացել է, ունեցել երկու աղջիկ, մի տղայ: Այսօր էլ երեք թոռնիկ ունի: Հնգուկ ու սրտով մեծ հայրենասէր է: 1994 թուականի Փետրուարին որպէս կամուտը մեկնել է Արցախ, Հատրութի շրջան՝ դաշտային հիւանդանոցում որպէս վիրաբույժ քույր ծառայելու: Նրա յետոյ ուղիներով է մեկնել ամուսինը: Արկաղի Գրիգորեանը, որը կարճ ժամանակ ամուսնու է՝ որբացնելով երեխաներին ու կնոջը:

Այժմ էլ Անահիտան աշխատում է զինուորական հիւանդանոցում: Մեր քաջասիրտ հայուհիներին հրապարտութեամբ ենք լիշուում. բաներ նրանք մեր անցեալի հայ կանանց թողած լաւագոյն աւանդութիւնների շարունակողներն են՝ որպէս ասպետներին:

«Երկիր»

ՍՈՒՐԸՆ ԱՍՍԵՆԵԱՆ

ԱՄԵՐԻԿԱՆ ԽՏՐԱԿԱՆ ԸՆԴՈՂՈՒԹԻՒՆ

ԻՐԱՆԱՀԱՅ ԳԱՂԹՈՂՆԵՐՈՒ ԱԼԻՔԸ

Արտագաղթող իրանահայերու Միացեալ Նահանգներ մուտքը կազմակերպող գլխաւոր միութիւններէն «Բէքըլիք Զէրիթիք»-ի համաձայն, մօտ օրէն շուրջ 1000 իրանահայեր պիտի հասնին Կլեմսոն, Ֆալիֆորնիա:

Ըստ Աւստրիոյ մէջ Միացեալ Նահանգներու գաղթականական գրասենեակին պատասխանատուներէն Լէոնար Ժորթի, արտագաղթող իրանահայերը կու գան Աւստրիոյ իրենց գրասենեակը՝ ապաստանելու դիմումագիրներ ներկայացնելու համար. վեց ամիս տեւող գործընթացը մաս կը կազմէ իրանահայերու վերաբնակեցման ծրագրին: Ցարդ Ժորթի գրասենեակը 2000 թուականին համար իրանահայերէն ընդունած է 5000 դիմումագիր: Նշենք, որ այս ծրագիրը մտաչելի չէ Հայաստանի քաղաքացիներուն:

Միւս կողմէ, ի յուր 1000 հայ գաղթականներու ժամանումին, Կլեմսոնի մէջ ստեղծուած է ինուհայ մը: Շրջանին պատասխանատուները մտահոգ են ի մասնաւորի ժամանող 200 իրանահայ դպրոցականներուն հակառակորդ: Ըստ անանցիկ արդէն իսկ ինուհայ մը դպրոցները եւ անհրաժեշտ պիտի ըլլայ մտածել այլ ընտրանքներու մասին, ինչպէս՝ դպրոցական անգործածելի շէնքերու վերագործածութիւն, յաւելալ ժամերով եւ ամբողջ տարուան վրայ երկարող դպրոցական ծրագիրներու մշակում: Սակայն շրջանին պատասխանատուները կը յայտնեն, թէ լուրջ հարց է այս պայմաններուն տակ լաւ ուսուցիչներ ունենալը: Անոնց համար մտահոգութիւն է նաեւ դպրոցականներուն իրիկուան ուշ ժամերուն տուն վերադարձը:

Կլեմսոնի մէջ ստեղծուած այս մըքը նուորտին ի տես քաղաքային խորհուրդի անդամ Բաֆֆի Մանուկեան մեղադրեց մամուլը իրանահայ գաղթականներու ժամանումին հաղորդող ստեղծուած ժխտական անդադարով համար: «Բնակչութեան մէջ կայ այն տղաւորութիւնը, որ գաղթականները կը ներ-

խուժեն դպրոցներէն ներս: «Նիւզ Փրէս» թերթին մէջ հրատարակուած յօդուածները, որոնք կը կրեն «Հայ գաղթականներու ախր մը կը սպասուի», «Դպրոցները պատրաստ երեխաներուն համար» եւ «Գաղթականներ կրնան զերիւնդել դպրոցները» վերահիշատակը, բնականաբար սխալ եւ ժխտական տղաւորութիւն կը ստեղծեն ժողովուրդին մէջ: Առաջին անգամ չէ, որ գաղթականներ կը հասնին այս քաղաքը», յայտնեց ան:

Իսկ Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբին գործադիր տնօրէն Վիգէն Փափազեան անընդուն. «Նկատելի առած վերջերս հայերու եւ լատիններու կողմէ յարուցուած հարցերը, գերզգայնութիւն մը ստեղծուած է ժխտական լուրերու նկատմամբ, որոնք կը մղեն Կլեմսոնի բնակիչները անարդարօրէն հակադրուելու ինդրոյ առարկայ ազգային խմբաւորումներուն»:

ՀԱՄԲԻԿ ԱՍՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՍՅԸՆ

HAMPIG SASSOUNIAN C - 88440
CSP - L.A.C. D -5- 232 44750
60-TH ST. WEST LANCASTER, CA, 93536
USA

«ԱՉԴԱԿ»Ի ՄԷՋ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՍԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքեն «Ազգակ» մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանունը՝ հասցեն՝ հրատարակման թուականէն առեւտրական օր մը առաջ, ՄԻՆՉԵԻ ՆԵՐԿԱՅԵԱՆ ԺԱՄԸ 5:

ՄԱՆԱԿՅԻ ԱՇԽԱՐՀԻՆ Բացառութիւն են: Մահազդ կ'ընդունուի միջոցն ուշ գիշեր, այնքան ատեն որ գայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

Հայկական առաջին հզոր պետութիւնը արքա-դակն (աստուրա-բարբոնական) սեպագիր արձանագրութիւններում կոչուել է Դայաննի, իսկ ուրարտական կամ արարտեան սեպագիր արձանագրութիւններում՝ Դիաուխի: Դայաննի կամ Դիաուխի պետութիւնը, որի անունը առաջացել է հայոց Տայք նահանգանունը, ձեւաւորուել է սեպագիր արձանագրութիւններում վկայուած Նայիրի ցեղամիութեան տարածքային ու ցեղային հիմքի վրայ:

Նայիրի ցեղամիութեան մասին առաջին տեղեկութիւնը պահպանուել է Ն. Ք. 13րդ դարի առաջին կէսից, մասնաւորապէս Ն. Ք. 1260 թուականից: Այդ ժամանակ նրա կազմում կային 43 երկրներ, որոնք հասել էին առանձին - առանձին թագաւորութեան աստիճանի եւ ունէին իրենց անկախ թագաւորները: Երկրների հասարակական զարգացման այդ պիսի մակարդակը ցոյց է տալիս, որ Նայիրի ցեղամիութիւնը ունեցել է շատ վաղ անցեայ: Ն. Ք. 1260 թուականից Ասորեստանի թագաւոր Թուկուլթի - Նինուրթա Ա (1260-1230) նուաճում է Նայիրի ցեղամիութիւնը եւ դնում «յաւերժ ժամանակով հարկի տակ»: Թէեւ Թուկուլթի - Նինուրթա Ա չի յիշատակում Նայիրի ցեղամիութեան մէջ մտնող 43 թագաւորութիւններից մէկնունձ կի անուներ, որով հնարաւոր կը լինէր խօսել այդ ցեղամիութեան տեղի գտնուած գոնէ մի տունայի մասին, բայց նա ընդ զմուտ է, որ ցեղամիութեան տարածքը սկսուել է Սասունի լեռների Շուպարի ցեղամիութեան երկրներից դէպի հիւսիս տարածուած «Նայիրի երկրի լեռներից» կամ Տարօնի (Հայկական Տարօսի) լեռներից ու ձգուել մինչեւ «Վերին ծովի» կամ Սեւ ծովի հարաւային կողմերը:

Ն. Ք. 1115 թուականին Նայիրի ցեղամիութիւնը ապստամբում է Ասորեստանի դէմ եւ ուղղւել է թովթափեց առերկան հարկային լուծը: Ապստամբութիւնը ձնշելու համար Նայիրի ցեղամիութեան վրայ հէնց իր թագաւորութեան առաջին տարում արշաւանք է կատարում Ասորեստանի թագաւոր Թիգլաթպալասար Ա. (1115-1077): Նա յիշատակում է, որ այդ ժամանակ Նայիրի ցեղամիութեան կազմում կային 60 թագաւորութիւններ: Ասորեստանի թագաւորի դէմ մարտի են ելնում 23ր (Թուլմէ, Թուռուր, Թուալի, Կինդարի, Ուզուլա, Ունգամուէի, Ան-դիարէ, Պիլակինի, Աթուրգինի, Բուլխրարգինի, Շինիրիքնի, Նիւմուա, Պաիթերի, Ուերամ, Շուրուրիա, Աբանի, Աղանի, Քիրինի, Արլայա, Ուզուր, Նագարիա, Արարուրուի, Դայաննի):

Թիգլաթպալասար Ա. յաղթում է նրանց թագաւորներին ճակատամարտում եւ Նայիրի ցեղամիութեան միւս 37 թագաւորներին հետ, որոնք եկել էին օգնութեան, քոււմ է մինչեւ «Վերին ծովը» կամ «Նայիրի երկրի ծովը», բոլորին կործին դնում է ամենամեծ հարկի տակ, որի չափն էր՝ 1200 ձի, 2000 գլուխ խոշոր եղջերոււոր անասուն: Ասորեստանի թագաւորը իր յաղթանակի արձանագրութիւնն է հաստատում Արածանիի կառնաքերի մօտ, ուր տարածուած է Տուրուրբան (Տարօնի կողմ) նահանգի Ապահոււնիք գաւառի ժամանակակից Ենճայու ընկալմամբ: Արձանագրութեան մէջ նա յայտարարում է, թէ նուաճել է Նայիրի ցեղամիութիւնը Թուլմէ երկրից մինչեւ Դայաննի երկրի: Թիգլաթպալասար Ա. անցնում է Եփրատ գետը եւ մտնում Մելիդու (Մայաթիա) երկիր: Նրա հեռանալուց յետոյ Նայիրի ցեղամիութիւնը նորից է ապստամբում, քանի որ Թիգլաթպալասար Ա. յաջող երկու տարիներին եւս երկու արշաւանքներ է կազմակերպում այդ ցեղամիութեան դէմ: Տուեսայներ է նշում Նայիրի ցեղամիութեան ընկալմամբի վերաբերեալ:

Դրանցից առաջինը Վերին Եփրատն է, երկուրորդը՝ անմիջապէս «Նայիրի երկրի ծովը» կամ «Վերին ծովը», երրորդը՝ Արածանիի ակունքները, չորրորդը՝ Նայիրի ցեղամիութեան 23 թագաւորութիւնների անունները, որոնցից շատերը պահպանուել են հետագայ ժամանակաշրջանի տեղանունների մէջ եւ մատնացոյց են անում որոշ տունայներ: Փաստօրէն Թուկուլթի - Նինուրթա Ա. իւր Թիգլաթպալասար Ա. ի տեղեկութիւններին համաձայն Նայիրի ցեղամիութեան արեւմտեան սահմանը ձգուել է մինչեւ Վերին Եփրատը, հարաւային սահմանը՝ մինչեւ «Նայիրի երկրի լեռները» կամ Տարօնի (Հայկական Տարօսի) լեռները, հիւսիսային սահմանը՝ մինչեւ «Նայիրի երկրի ծովը» կամ «Վերին ծովը», արեւելեան սահմանը՝ մինչեւ Արածանիի ակունքները եւ միջին ձորոսի աւազանում գտնուող Տայք նահանգը:

ՏԵՍԱԿԵՏ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀՊԵՏՈՒԹԵԱՆ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ

Նայիրի ցեղամիութեան ընկալչների լեզուով արձանագրութիւններ չեն հասել: Այդ ցեղամիութեան լեզուի, ցեղային պատկանելութեան մասին տեղեկութիւններ ենք քաղում տեղանուններից, ցեղատեղանունների, անձնանունների ստուգարանութեան միջոցով: Ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ այդ անունները հիմնականում ստուգարանում են հայերէնի լեզուահիմքով: Սա նշանակում է, որ Նայիրի լեզու է հայայեցու ցեղերի միութիւն, հայայեցու ցեղերի, հայերի ընտաններէից մէկը:

Երբ Թիգլաթպալասար Ա. յաղթում է Նայիրի ցեղամիութեան թագաւորներին, այդ թուում Դայաննի (Դիաուխի) ու դնում հարկի տակ, միայն վերջինիս թագաւոր Սենին է հրոժարում ասուրական հարկային լծից:

Թիգլաթպալասար Ա. նրան գրում է, ապա պատ արձակում, որ կառավարի իր երկիրը: Հաւանարար Սենին անձնագանդութեան գաղտնիք կապուած էր նրա երկրի՝ Դայաննի (Դիաուխի) թագաւորութեան հզօրութեան հետ: Այս փաստը հիմք է տալիս մտածելու, որ հզօր Դայաննի (Դիաուխի) թագաւորութիւնը ունեցել է մեծ անցեայ եւ, հաւանարար, գոյութիւն է ունեցել նաեւ Թուկուլթի - Նինուրթա 1ինի (1260-1230) ժամանակ:

Թիգլաթպալասար Ա. ի աւերիչ արշաւանքներից յետոյ Նայիրի ցեղամիութեան թագաւորները շատերը կորցնում են զար: Նրանցից միայն Թուլմէն եւ Մայաննի (Դիաուխի) են կանգուն մնում ու հասնում ուրարտական դարաշրջանին, այսինքն՝ Ն. Ք. 5րդ դարի կէսին: Յիշեալ թագաւորութիւնները Հայկական լեռնաշարհի այլ երկրների հետ այդ ժամանակ ապստամբում են ասուրական պետութեան դէմ: Ասորեստանի թագաւոր Սայմանասար Գ. (859-824), որը նոր էր տիրել արքայական գահին, արշաւանքներ է կազմակերպում ապստամբ երկրների վրայ, որոնց հետեւանքով անկում է ապրում Թուլմէ երկիրը: Նայիրի ցեղամիութեան երկրներից կանգուն է մնում միայն Դայաննի (Դիաուխի) թագաւորութիւնը, որի արքան էր Ապին:

Հզօրացող ուրարտական պետութիւնը պատէ չի նման փակում է Ասորեստանի նուաճումների ճանապարհը դէպի հիւսիս: Դայաննի (Դիաուխի) պետութիւնը սկսում Ն. Ք. 844 թուականից գաղտնագրում է ասուրական հարկային լծից եւ ձեռք բերում անկախութիւն ու զատութիւն մինչեւ Ուրարտուի թագաւոր Մենուայի (810 - 786) ժամանակաշրջանը, երբ Դայաննի - Դիաուխի պետութեան վրայ նուաճողական արշաւանքներ է սկսում ուրարտական պետութիւնը:

Դայաննի - Դիաուխի պետութիւնը գտնուել է Ենճայու - Ապահոււնիքի, Եազիթաշ-Շաշլուուի, Զիվին-Չուաննի, Թուեղք-Թարոււնի, Դաշ-Կերպի-Մակայթունի, Կանյիւձ-Հիրախի, Վադարչակուն (Թոփրախ-Քայլ)-Ուիթբուլիսի արձանագրութիւնների գրուած տարածքների օղակի մէջ եւ նրանց չրջակայքում, այսինքն՝ Կուր գետից մինչեւ Վերին Եփրատի արեւելեան կողմերը եւ Արածանիից ու Վերին Արաքսից մինչեւ Սեւ ծովը, որը գրեթէ համընկնում է Նայիրի ցեղամիութեան տարածքին:

Հետագայում այս տարածքում ձեւաւորուել են Մեծ Հայքի Տայք ու Գուգարք նահանգները, Այրարատ նահանգի Բասինը մինչեւ Շիրակ գաւառները, Տուրուրբան (Տարօնի կողմ) նահանգի Ապահոււնիք գաւառը, Բարձր Հայք նահանգի Կարին, Սպեր, Եկեղեց, Մանանաղի, Դերձան եւ Շառուարդ գաւառները: Տարածքը կազմել է չուրջ 150, 000 քառ. քմ:

Դայաննի-Դիաուխի պետութեան մէջ մտել են չուրջ 28 երկրներ կամ մարզեր:

Դրանք են՝ Եղեթի (Շաղկթ), Բայթուլիսի, Խալդիրիուլիսի, Շերիագի, Բիանի, Խուշանի (Խուշայիսի), Թարոււնի (Թուեղք), Զարախա (Զաւաւալ), Սիրիմութարա, Մակայթունի, Իգանի, Էրիախի (Շիրակ), Ափունի (Ապահոււնիք, Հաւնուեիք), Ուիթբուլիսի (Աշկերտ), Արիխանիսի (Արեղանք), Անիշթիրգ, Կուրգարան, Ուլթու-

գա, Դիդի, Աշկայաշի, Կուղա, Շաշլուու, Շաշքի, Արդարաքիսի, Կարիուլիսի, Լուշա, Քաթարգա, Գուլութախի: Այդ պետութիւնը ունեցել է 105 մարդներ եւ 453 քաղաքներ:

Իր ընդարձակ տարածքով, մարզերի, մարոցների ու քաղաքների բազմաքանակութեամբ Դայաննի-Դիաուխի պետութիւնը գերազանցել է բուն Ուրարտուին, որ կազմուած էր ընդամէնը 4 քաղաք-ամրոցներից (Արգաշքու, Արամալի, Զագիւնա, Սուգունիա) ու նրանց չրջակայքի ընկալմամբ:

Դայաննի-Դիաուխի պետութիւնը ունեցել է 10,000 զօրք: Ուրարտական պետութիւնը Արամի էր ժամանակ, երբ նոր էր քաղաքական ապարկց Թեմի, ունէր ընդամէնը 3400 զինուոր, իսկ Իշպուլիսի ժամանակ, երբ արշաւանքներ էր կազմակերպում ուրիշ երկրների վրայ, նրա զինուորների թիւը տատանում էր 10,000ից մինչեւ 17,000ի սահմաններում: Համեմատութիւնը վկայում է, որ Դայաննի-Դիաուխի պետութիւնը զինուորական մեծ ուժ է ունեցել: Չօրք են ունեցել նաեւ Դայաննի-Դիաուխի պետութեան երկրները կամ մարզերը:

Դայաննի-Դիաուխի պետութիւնը ունեցել է գարգացած տնտեսութիւն, որի զլխաւոր ճիւղերից են եղել մետաղամշակութիւնը (սուկու, արծաթի, պղնձի), անասնապահութիւնը (խոշոր ու մանր եղջերաւորների բուծումը) եւ ձիարուծութիւնը: Միայն Դայաննի-Դիաուխի պետութիւնից ուրարտական թագաւորների ձեռք բերած սուկու, արծաթի եւ պղնձ հարկի գերացումը է միւս երկրների հարկին: Այս փաստը ընգծում է Դայաննի-Դիաուխի պետութեան հզօրութիւնը Հայկական լեռնաշարհի միւս երկրների համեմատութեամբ:

Ուրարտուի թագաւորներից Դայաննի-Դիաուխի պետութեան վրայ արշաւանքներ են կատարել Մենուա եւ Արգիշտի Ա.: Դայաննի-Դիաուխին յամառ եւ երկարատեւ դիմադրութիւն է ցոյց տուել Ուրարտուին՝ չուրջ 43 տարի (Մենուայի թագաւորութեան սկզբից մինչեւ Արգիշտի Ա. ի թագաւորութեան 19րդ տարին): Մենուան նկատել է ունեցել Դայաննի-Դիաուխի ընդարձակ տարածքը, մարզերի, մարոցների ու քաղաքների բազմաքանակութիւնը, զօրքի հզօրութիւնը ու տնտեսութեան զարգացման բարձր մակարդակը, եւ այդ պետութիւնը համարել է «հզօր պետութիւն» (KUR tarac): Նման գնահատականի եւ ոչ մի պետութիւն, թագաւորութիւն կամ երկիր չի արժանացել ուրարտական թագաւորների կողմից: Իրօք այդ ժամանակ Դայաննի-Դիաուխին եղել է Հայկական լեռնաշարհի ամենահզօր պետութիւնը, ի հարկէ, իրեն նուաճողից՝ ուրարտական պետութիւնից յետոյ:

Այնուամենայնիւ, «հզօր պետութիւն» կոչուող Դայաննի-Դիաուխին Արգիշտի 1ինի ժամանակ, մասնաւորապէս նրա թագաւորութեան 19րդ տարում, այսինքն՝ Ն. Ք. 767 թուականին, նուաճում է ուրարտական պետութեան կողմից ու դառնում հարկատու երկիր:

Թէեւ Դայաննի-Դիաուխին նուաճում է, պահպանում է պետականութիւնը, արքայական գահը, ինչպէս հաստատում է Արգիշտի Ա. ի եւ Դայաննի-Դիաուխի պետութեան թագաւոր Ուտուփուրչինի Ն. Ք. 767 թուականի սեպագիր պայմանագրով: Դայաննի-Դիաուխի պետութիւնը գոյատեւել է ուրարտական պետութեան կազմում մինչեւ անկումը Ն. Ք. 539 թուականը:

Փաստօրէն Դայաննի-Դիաուխի պետութիւնը գոյատեւել է չուրջ 721 տարի (Ն. Ք. 1260 թուականից մինչեւ Ն. Ք. 539 թուականը): Այդ ամբողջ շրջանում Դայաննի-Դիաուխի պետութիւնը անկախութեան է հասել ընդամէնը 77 տարի (Ն. Ք. 844 թուականից մինչեւ Ն. Ք. 769 թուականը), իսկ լիակատար անկախութեան ու ազատութեան հասել է 34 տարի (Ն. Ք. 844 թուականից մինչեւ Ն. Ք. 810 թուականը):

Հին արեւելքում գիրք ուղեկցել է հզօր պետութիւններին: Թէեւ Դայաննի-Դիաուխի պետութիւնը հասել է հզօրութեան, բայց այդ հզօրութիւնը կարճ է տեւել, եւ այնտեղ գիր չի առա-

ջացել, ընկալութեան լեզուով արձանագրութիւններ չեն գրուել: Դայաննի-Դիաուխին ձեւաւորուել է Նայիրի ցեղամիութեան հիմքի վրայ, բայց այդ ցեղամիութեան միւս երկրներից որեւէ մէկի անունը չի պահպանուել Դայաննի-Դիաուխի պետութեան կազմում մտնող երկրների կամ մարզերի անուններին շարքում: (Նրանք անկում են ապրել Ասորեստանի աւերածութիւնների հետեւանքով): Այս հանգամանքը կասկածանք է առաջացնում Դայաննի-Դիաուխի պետութեան ընկալչներին առանց որեւէ լրացուցիչ հիմքի ցեղային գետնի վրայ նոյնացնել Նայիրի ցեղամիութեան ընկալչութեանը, որը, ինչպէս վերելում ընդ զմուտ, պատկանում էր Հայկական ցեղային աշխարհին: Ուստի անհրաժեշտութիւն է զգագուել լրացուցիչ որոշել նաեւ Դայաննի-Դիաուխի պետութեան ցեղային կազմը եւ համեմատել Նայիրի ցեղամիութեան ցեղային կազմի հետ: Այս հարցը պարզեցիլ որոշել նաեւ արքայական տեղէնը զիմել Դայաննի-Դիաուխի պետութեան տեղանուններին, ցեղանուններին եւ անձնանուններին ստորագրութեանը: Ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ Դայաննի-Դիաուխի պետութեան այդ պիսի անունները դարձեալ ստուգարանում են հայերէնի լեզուահիմքով, ինչպէս Նայիրի ցեղամիութեանն էր (Այսպէս օրինակ՝ Զուանի տեղանունը հիմքում՝ ընկած է հայերէնի «ձու» արմատը, Արդարաքիսի ցեղատեղանունը հիմքում հայերէնի «արդար» արմատը, Կադիուլիսի տեղանունը հիմքում՝ հայերէնի «կապել» արմատը, Ապուրի տեղանունը հիմքում՝ հայերէնի «ափն» արմատը, Թարիունի տեղանունը հիմքում՝ հայերէնի «թառ» (բարձր տեղ) արմատը, Կաղա տեղանունը հիմքում՝ հայերէնի «կատար» արմատը, Դիուի տեղանունը հիմքում՝ հայերէնի «դիտող» արմատը, Սէին անձնանունը հիմքում՝ հայերէնի «սէն» (մետաղի տեսակ՝ կապար) արմատը, Ասիա անձնանունը հիմքում՝ հայերէնի «ասող» (խօսող) արմատը, Ուտուփուրչինի անձնանունը հիմքում՝ հայերէնի «ուժ», «փոր» (ձորագաւառ) եւ «չինոց» (կառուցող) արմատները եւ այլն):

Ուստի կարելի է հաստատ ասել, որ Դայաննի-Դիաուխին եղել է Հայկական պետութիւն:

Դայաննի-Դիաուխի պետութիւնը ունեցել է արքայական հարստութիւն այն շրջանից, երբ հանդէս է եկել որպէս թագաւորութիւն ու շարունակել ընդհուպ այն շրջանը, երբ մարտնչում էր Ուրարտուի դէմ: Պահպանուել են նրա արքայական հարստութիւն թագաւորներից Սէնիի (1115), Ասիայի (844), Ուտուփուրչինի (810-767), ինչպէս նաեւ արքայազն Արնուկուանի (767) անունները: Պահպանուել են նաեւ տեղեկութիւններ, որ Դայաննի-Դիաուխի պետութեան երկրները կամ մարզերը եւս ունեցել են իրենց թագաւորները կամ արքայիկները: Այդ պիսի երկրներից են Իգանին, Խուշայիսին կամ Խուշանին, Արիխանիսին, Շաշքին, Արդարաքիսին, Կարիուլիսին, Բայթուլիսին: Յիշատակուել են դրանցից առաջինի թագաւորներ Դիուձիսիի ու Կապուրիսիի, երկրորդի թագաւոր Նախանիի ու երրորդի ցեղապետ Մուրիսիի անունները: Հաշուառնուելով այն փաստը, թէ այդ արքայիկները Ուրարտուի որ թագաւորի ժամանակ են գործել, կարելի է ենթադրարար որոշել նաեւ դրանց զործելու որոշ թուականները: Ընդ որում, դրանցից Դիուձիսին, Նախանիսին ու Մուրիսիսին գործել են Ն. Ք. 143 թուականին, իսկ Կապուրիսին՝ Ն. Ք. 744 թուականին:

ՏՆՄԻԹՐԻ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Հայաստանի Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի արեւելագիտութեան հիմնարկի սեպագրական քաղաքակրթութիւնների բաժնի ասպ գիտաշխատող, պատմական գիտութիւնների թեկնածու, ուրարտագետ:

«Հայաստանի Հանրապետութիւն»

ԴԱՐԵՐԻ ԽԱՉՆԵՐՈՒԿՈՒՄ

ԱՐԵՒԱՅԻՆ ՔԱՂԱՔԸ՝ ԻՐԱԿԱՆ ԴԷՄՔՈՎ

Հայրենի «Հայաստանի Հանրապետութիւն» բերքը վերջերս հարազարդոյ մը ունեցաւ Վենետիկի ճարտարապետական միջազգային եօթներորդ ցուցահանդէսին մասնակցած Հայաստանի Ազգային թանգարանի տնօրէն Աշոտ Գրիգորեանի հետ:
Հարազարդոյցին ընթացքին Ա. Գրիգորեան պնդարարձած է, ժամանակակից ճարտարապետութեան տուրք տալով հանդերձ, քամանեանկանինը ետդարձ կատարելու եւ այդպիսով Երեւանի ճարտարապետական կառոյցները ամբողջացնելու հրամայականին:

ՊԱՏՄԱՍԽԱՆ. - Վենետիկեան այս ցուցահանդէսները «Պիեմալէ» անուամբ, գործում են դարակազբից են մրցոյթ-ստուգատեսներ են արուեստի բոլոր բնագոյնների համար: Մի ամբողջ դար մենք այդ ցուցահանդէսներում չենք ներկայացուել: Մասնակից բոլոր երկրները քաղաքի որոշակի հատուածում կառուցել են իրենց տպաւորները, ներկայացրել նորի իրենց փնտրելու փնտրելու, մրցանակներ ստացել: Մեր անուղը Վենետիկ եղաւ ընդամենը 1996ին, դեռեւ անասնց ինքնուրույն տաղաարի (հիւրընկալուեցինք ռուս ինքնուրույն տաղաարի (հիւրընկալուեցինք ռուսներին յարկի տակ), իսկ այս տարի, Յունիսի 16ին, Ա. Դագար կղզում բացեցինք նաեւ հայկական ճարտարապետութեան մեր տաղաարը:

Հ. - Ի՞նչ մրցանակներ էին սահմանուել այս անգամ:

Պ. - Մրցանակ ճարտարապետութեան մէջ նոր խօսքի, նորագոյն ներդրումների, լատգոյն տաղաարի համար են այլն, որոնք բոլորն էլ գործ-

նակաւում մեզ համար անմտտելի են, որովհետեւ խնդիր նախ են առաջ ընկերային է. պիտի կարողանան իրագործել: Ճարտարապետութիւնը թանկ հաճոյք է, որ յաւուր պատշաճի կարող է իրագործել միայն պետութիւնը: Պատմաբանութիւնը հզօր է, այնքան անելի ազատ եւ ինքնուրոյն է, հետեւողական ազգային դիմագիծ պահպանելու հարցում: Այսօր ընդհանրապէս դժուար է ասել, թէ ինչ են ֆրանսական, անգլիական կամ ամերիկեան ճարտարապետութիւնները: Բոլորն էլ, ի վերջոյ, նոյն կերպ են կառուցում: Նոր հիւրք, նոր արհեստագիտութիւնը չեն կարող չընդունել: Ժժան է: Նորի պահանջը բերում է նոր ձեւի պահանջ: Բայց, բոլոր ղէպներում, ի՞նչ կառուցես, որ նորի հետ միասին նաեւ դիմագիծ ունենայ. սրա մասին պէտք է խորհել:

Հ. - Այդ խորհրդը երեւացի՞ն պիտեալուտ:

Պ. - Այո, անտարակոյս, եւ ի տարբերութիւն այլ երկրների նորամուտի (առաջին անգամ հանդէս էին գալիս նաեւ Գիստաան ու Եսթոնիան) պաշտօնակէտ շեշտուեց, որ Հայաստանի մուտքը պիտեալիս համար նոր էջ է: Պիեմալէ ընդհանուր կարգախօսք երրորդ հազարամեակի քաղաքն էր: Ճարտարապետների Միութիւնը յայտարարեց մրցոյթ «Մայրաքաղաքը 2000ին»

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ - ԲԱՂԱՔԱԿԱՆ

ԿԱՍՊԻՑ ԾՈՎՈՒ ՔԱՐԻՒՂԻ ԵՐԱԶԸ ԿՐՆԱՅ ՔԱՐԻՒՂ ՓՆՏՈՂՆԵՐՈՒ ՔՈՒՆԸ ՓԱԽՑՆԵԼ

Հիւսիսային Կասպից ծովուն յատակը գտնուող Բազանի երկրաբանական կազմում ծերեկար ծամաճակի վեր հսկայ հարստութեան մասին երազել կուտար քարիւղի ճարտարարուեստին մէջ աշխատողներուն:

Անոր գոյութիւնը ծանօթ է տարիներ ի վեր. սակայն մինչեւ վերջերս աշխարհի ամենէն մեծ երկրաբանական կառոյցը անձեռնմխելի մնացած էր. հեռու միջազգային քարիւղի ճարտարարուեստի հաստատութիւնէն:

Անցնող շաբաթներուն անկախ մեծ հռչակ ստացաւ, երբ Ղազախստանի մէջ գործող քարիւղի միջազգային ԸՆԿերակցութիւնը (ՕՔՔՈՔ) յայտարարեց, թէ քարիւղ եւ կազ յայտնաբերած է աշխարհի քարիւղի վերջին մեծ հանքերուն մէջ. ինչպէս զայն կը կոչեն ճարտարարուեստի պատասխանատուները:

ՕՔՔՈՔի գործակիցներուն ունեւոր «չատ մեծ թիւերով կը ներկայացնեն արտարութեան եւ պահեստներու քանակը», ըստ ԸՆԿերակցութեան երկրագիտական պաշտօնեաներէն մեկուն: Սակայն նոյնիսկ ամենէն զգուշ ԸՆԿերակցութիւնները մեծ խանդավառութիւն կ'ապրին շրջանին ընձեռած կարողականութիւնը ճանչնալով. Բազանկանը ամենէն մեծ պահեստն է. սակայն միակ յայտնաբերուած կառոյցը չէր:

Կասպից ծովու շրջանի աշխարհ քաղաքական անկայունութիւնը նկատարանելով աներկայելի հարստութեան հետ կապուած երազներուն ընդհանրապէս կը հետնելի քարիւղի ԸՆԿերակցութիւններով խնդրուած քաղաքական գլխացաւերը, յատկապէս երբ որոցիկ Ռուսիան կը յայտնուի պատկերին մէջ:

Նախագահ Վլատիմիր Փութինի պաշտօնի տարածումէն ետք ամիս ետք տակաւին կը սպասեն գիտնալու համար, թէ Փութին ինչպէս պիտի վարուի կասպեան աւազանի մասին հարկերային Միութեան երկրներուն հետ: Փութինի արտաքին քաղաքականութեան մոր հայեցակարգին մէջ կը նշուի, թէ շրջանը հիմնական տեղ կը գրաւէ ռուսական շահերուն մէջ:

Եթէ Մոսկուա որոշէ աւելի աշխուժ դերակատարութիւն ունենալ շրջանին մէջ, քանի մը տարբեր մօտեցումներ կրնայ ցուցաբերել: Մասնագետներու համաձայն, անկախ կրնայ վերադառնալ իր անանդական դերին իբրեւ գերիշխող ուժ շրջանին մէջ. կամ կրնայ պարտաւոր ըլլալ յարմարելու եւ ինքզինք հաւասար գործակից համարելու շրջանին մէջ:

Փութին կ'ուզէ «ռուսական միատարր քաղաքականութիւն վարել Կասպեան շրջանին մէջ», ի ըստ Միացեալ Նահանգներու Էլչմպիրի Ուսումնասիրութեան ԸՆԿերակցութեան աշխատակից Լորենց Ռոսենբա: «Ան կրնայ խոստովանելի առաջարկներ ընել կամ սպասուելիքներ օգտագործել. սակայն մինչեւ հիմա առաջարկներով է, որ կը ներկայանայ», կը շարունակէ ան:

Մոսկուայի գլխաւոր առաջարկը պիտի ըլլայ շրջանային զանազան տարածքներու լուծման մէջ առաջնորդի դեր խաղալ: Կասպեան աւազանի երկիրները անհամաձայնութեան մէջ են ծովը իրար մէջ բաժնելու, յատկապէս անոր կազի եւ քարիւղի պահեստները, ինչպէս նաեւ պահանջ փոխադրող քարիւղատարներու եւ կազատարներու գծով:

Կրեմլին արդէն առաջարկ ներկայացուցած է այս ամբողջ ընթացքին Աստրախանի մէջ հինգ երկիրներու միջեւ կասպեան գազաթափողով մը կայացնել, իսկ շրջանին մէջ Ռուսիոյ յատուկ պատուիրակ Վիքտոր Քալիուսինի կ'այցելէ շրջանի երկիրներ: Մոսկուա նաեւ շարք մը առաջարկներ ներկայացուցած է ծովը ազգային մասերու բաժնելու գծով, հաւանաբար անոր որ այդ ծրագիրը այդքան ալ արդար չէ, ինչպէս որ կ'երեւի առաջին հայեացքով, կ'ըսեն մասնագետներ:

Շրջանին մէջ ռուսական քաղաքական մարտավարութեան ամենէն ճակատարական հարցը Ազգայնական կուսակցութեան մէջ ամենէն արեւմտեան մասին հարցերը իր յիշքը մայսկին հարկերային Միութեան երկիրներուն մօտ, եթէ կարենայ նպաստել Ազգայնականի եւ շրջանին մէջ իր ամենէն մօտիկ դաշնակից Գայաստանի միջեւ գոյութիւն ունեցող Լեւոնային Ղարաբաղի տարածապահ լուծման:

Միեւնոյն ատեն Կրեմլին սպասուական խաղաքարտեր կ'աւտ մէկ կողմ: Հակառակ անոր որ Ազգայնական իր դրացի Գայաստանին չափ ճնշումներու չ'ենթարկուիր Ռուսիոյ կողմէ, բայց եւ այնպէս Մոսկուա բազմիցս յիշել տուած է Պաղմուտ, որ անկախ ստորադաս կողմն է իրենց յարաբերութեան մէջ:

Այսուհանդերձ ազգերի նախագահ Դայտար Ալիեւը մեղմացուցած է իր հակառուսական կեցուածքները եւ ներկայիս անհաշուաբար Փութինը կը համարէ գործակից մը:

Պաղմուտի մէջ կարգ մը դերակատարութիւններ կ'ընեն իրենց մօտեցումները ընդլայնելու տեղաշարժներու: Ըստ այդ դերակատարութեան Գայաստանը շարք մը քաղաքական քայլերով մտնուած է իր անհաւանական դերակատարութեան մէջ: Նախապէս հարկերային Միութեան պատկանող Կերդոնական Ասիոյ երկիրները յատկապէս մտնած են Մոսկուային:

Վերջին տարիներուն Ռուսիա շրջանին մէջ իր քաղաքական գործունէութիւնը յառաջ տարած է առեւտրական գործնապայտութեան մէջ:

Սակայն Բազանկանին նման հազուագիտ զանազան հիշկարողութիւններ ունին, եւ զոնց մօտիկ ապագային բոլորակալ արժեքները սենեան պիտի ըլլան հիւսիսային Կասպից ծովու կապոյտին:

(ՖԱՅԼԵՆԸԸԸԸ ԹԱՅՄՁ)

ՈՒԺԻ ԱՌԱՆՑԸ

Վերջին տարուան ընթացքին քարիւղի սակագիներու 300 տոկոս քարձրացումը առիթ տուաւ քարիւղի ԸՆԿերակցութեանը, որ վճարեց իրենց պարտքերը եւ կարեւոր ներդրումներ կատարեց նոր հանքեր յայտնաբերելու աշխատանքներուն մէջ: Մայիսի սկիզբը Ղազախստանի Բազանկան հանքերուն մէջ քարիւղի յայտնաբերումը լայն անդրադարձ ունեցաւ քարիւղի ԸՆԿերակցութեանը մօտ: Անաւել, քարիւղի սակագիներու այդ քարձրացումը պատճառ դարձաւ, որ Զինթրոնի վարչակարգը թափ տայ Պաշու - Ճէլհան քարիւղատարի շինութեան լուսինի աշխատանքներուն:

Այս գարգացումները կրնան նաեւ քարիւղի քաղաքականութեան աշխարհաքաղաքական կեցողքը միջին Արեւելքէն տեղափոխել դեպի Ռուսիոյ, Կերդոնական Ասիոյ եւ Չինաստանի միջեւ գտնուող այդ հիւսիսային անկայուն շրջանը, քարիւղի հսկաններուն շնորհիւ ուժ եւ տնտեսական կշիռը՝ ամբողջ Եւրասիոյ տարածքի մ վրայ:

Այս գծով հարկ է յիշել, որ յառաջիկայ տարուան Յունիս 10ին Անգլիոյ Օքսֆորտ համալսարանը պիտի կազմակերպէ Մարքիտոյ Յորթի խորհրդածոյցը, որ տեղի պիտի ունենայ Անգլիոյ Մենտրիքթըք գիւմարական ակադեմիայի հովանաւորութեամբ: Մասնակցողներուն համաձայն, խորհրդածոյցի ճակատակն է վերակենդանացնել տնտեսութեանը բրիտանական աշխարհաքաղաքականութեան հայր Սըր Չարլզ Մարքիտոյի, որ 1904ին հրատարակուած «Պատմութեան աշխարհագրական առանցքը» վերջնագիրով յօդուածին մէջ կը գրէր, թէ Եւրասիական կեցողքը դեպի արդար, որ կը ներառէ նաեւ Կասպից ծովը: շրջանը, պիտի ընկալուի աշխարհը:

Մարքիտոյ Յորթի հիմնադրութեան մէջ վերջերս նաեւ, որ «ուժի չենթարքեւ է եւ յառաջիկայ տնտեսութեանը ընթացքին պիտի ըլլայ Կասպեան, Եգեանեան եւ արեւելեան միջերկրական ղեկավար Պալքաները տարածուող շրջանը: Այս հարցը պիտի քննարկուի եւ կազի հանքերէն եւ ուժանիւթի այդ պաշարները փոխադրելու ձեւէն»:

(ԹԵՂՂԱՆ ԹԱՅՄՁ)

Եթէ Մոսկուա որոշէ աւելի աշխուժ դերակատարութիւն ունենալ շրջանին մէջ, քանի մը տարբեր մօտեցումներ կրնայ ցուցաբերել: Մասնագետներու համաձայն, անկախ կրնայ վերադառնալ իր անանդական դերին իբրեւ գերիշխող ուժ շրջանին մէջ. կամ կրնայ պարտաւոր ըլլալ յարմարելու եւ ինքզինք հաւասար գործակից համարելու շրջանին մէջ:

Փութին կ'ուզէ «ռուսական միատարր քաղաքականութիւն վարել Կասպեան շրջանին մէջ», ի ըստ Միացեալ Նահանգներու Էլչմպիրի Ուսումնասիրութեան ԸՆԿերակցութեան աշխատակից Լորենց Ռոսենբա: «Ան կրնայ խոստովանելի առաջարկներ ընել կամ սպասուելիքներ օգտագործել. սակայն մինչեւ հիմա առաջարկներով է, որ կը ներկայանայ», կը շարունակէ ան:

(ՖԱՅԼԵՆԸԸԸԸ ԹԱՅՄՁ)

ԹՈՒՐԻՔՄԵՆԻՍՏԱՆԻ ՄԵԿՈՒՍԱՅԱԾ ՆՈՐ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Թուրքմենիստան միշտ եղած է Կեդրոնական Ասիոյ արտառոց երկիրը: Այս տարի նախագահ Սափարնուրաթ Նիյազովի անհատապաշտութիւնը աւելի եւս խորացուց Թուրքմենիստանի մեկուսացումը: Գարցը սկսաւ 28 Դեկտեմբեր 1999ին, երբ Նիյազով ինքզինք ցմահ նախագահ յայտարարեց. Անոր եսասիրութիւնը աւելի ճնշիչ դարձաւ, երբ ան իր մահացած հայրը ու մայրը ազգային հերոսներ հռչակեց: Շարունակելով մեկուսացման ընթացքը 21 Յունիսին Թուրքմենիստան սկսաւ արձանագրել եւ իրականացրէր օտարապաշտութիւնը:

Տնտեսական գետնի վրայ եւս նախագահը կը փորձէ մեկուսացնել 5 միլիոն բնակչութիւնը հաշուող այդ երկիրը: 21 Յունիսէն սկսեալ թուրքմեն քաղաքացիներուն արգելուած է օտար դրամատուներու մէջ հաշիւներ ունենալ, իսկ 30 Յունիսին ինքզինք բաշխող վերջին ընկերութիւնը բռնի ձեռով փակուեցաւ: 20 Յունիսին Նիյազով համալսարաններու գծով նոր քաղաքականութիւն մը յայտարարեց ըսելով, որ բոլոր համալսարանական ուսանողները պիտի գտուին (մինչեւ երբ սերունդը եւ երթալով) եւ միայն «ամենէն արժանիները» պիտի պահուին: Այն աշակերտները, որոնք նախապէս արտօնութիւն տրուած է Միացեալ Նահանգներու մէջ ուսանելու, ներկայիս արտօնուած չեն երկիրը զգնելու:

Այս բոլորը արգելք կը հանդիսանան սահմանային յարաբերութիւններու գոյացման, կը վիստեցնեն ներդրողները, եւ հետեւաբար կ'ականահարեն տնտեսական բարգաւաճումը: Այս իսկ պատճառով Արեւմուտքը շատ ընտելիչ չունի այսպիսի ինքն իր մէջ քաշուած վարչակարգի մը հետ: Արդէն իսկ երկու արեւմտեան ընկերութիւններ («Ճեմըզըլ Էլեքթրիք» եւ «Պէլըր») հրաժարած են թուրքմենական բնական կազի փոխադրութեան համար մշակուած միջոցապահ կազատարի ծրագիրէն. ներկայիս միայն «Ռոյալ Տաշ Էլ» կը մասնակցի ծրագիրին:

Արդեօք ո՞վ պիտի ուզէ գործակցել Թուրքմենիստանի հետ: Դասաւարար Ռուսիա: Այս երկու երկիրները վերջերս նորոգեցին համաձայնութիւն մը. որուն հիման վրայ Թուրքմենիստան կազ պիտի հայթայթէ Ռուսիոյ: Սակայն երկար ժամանակի վրայ Ռուսիոյ համար աւելի նպատակաւոր է իր բնական կազի հանքերը պեղել եւ օգտագործել, քան բարձր սակագիններով կազ գնել Թուրքմենիստանէն: Սօսիկ յարաբերութիւններու առումով, սակայն, Թուրքմենիստան մեծ խանդավառութիւն չի ցուցաբերել: Անկախ Կեդրոնական Ասիոյ միակ երկիրն է, որ չի մասնակցիր շրջանին մէջ Ռուսիոյ ղեկավարած ապահովական կառոյցներուն: Աշխապատ նոյնիսկ մերժած է միանալ շրջանային միւս ուժերուն թափանցանի դէմ իրենց

պայքարին մէջ: Ղազախստան պատրաստ է Թուրքմենիստանը իբրեւ տարանցիկ ծամբայ օգտագործելու դէպի Պարսից ծոց կամ Թուրքիա քարիւղ եւ կազ արտածելու համար: Սակայն երկու ծրագիրներն ալ կախեալ են Իրանի հաւանութենէն: Իրանը Թուրքմենիստանի բնական ընկերակցին մէջ է. եթէ ոչ գործակիցը, քանի մը պատճառներով, Թուրքմենիստանի բնակչութեան մեծ մասը հաստատուած է Իրանի հետ սահմանի վրայ: Նոյնիսկ պատճառի քննարկներու պարագային, Իրան կրնայ ապրանք փոխադրել դէպի Թուրքմենիստան:

Սակայն, Իրան թուրքմենական քարիւղի արտածման բնական ընտրանքն է: Արդէն իսկ կանոնուած է փոքր կազատար մը, որ թուրքմենական բնական կազը կը փոխադրէ դէպի Իրանի շրջանը: Աւելի մեծ կարողականութիւնը ներառող ծրագիրներ գոյութիւն ունին թուրքմենական կազը դէպի Պարսից ծոց եւ Իրանի վրայով դէպի Թուրքիա հասցնելու:

Այս համագործակցութեան զինք քաղաքային է եւ կարծես Նիյազով պատրաստ է զայն վճարելու. Թուրքմենիստան պէտք է Իրանը պաշտպանէ Կասպեան հարցերուն մէջ: Վերջապէս, Կասպից ծովը կը համարուի քարիւղի աշխարհի ամենէն մեծ հանքերէն մէկը, եւ հարկողային Միութեան փլուզումէն զրեթէ տաք տարի ետք տակաւին անոր օրինակական կարգավիճակը կը մնայ անորոշ:

25 Յունիսին Թուրքմենիստանի արտաքին գործընկալարար Պորիս Շէյխմուրադով յայտարարեց, թէ Թուրքմենիստան երբեք բանակցութեան չի մտնիր Կասպից ծովու կարգավիճակին գծով, եթէ Իրան պիտի չ'մասնակցի: Նախապէս Ռուսիա փորձած էր զաշակողութիւն մը հիմնել նախկին խորհրդային Միութեան երկիրներով ձախտութեան մատնելու համար Կասպից ծովու մէջ աւելի մեծ բաժին ունենալու Իրանի պահանջը: Նաեւ տորքմեն ըլլալով, որ Թուրքմենիստան տակաւին չ'աւ կապեր ունի Թաիլանդի հետ, Աշխապատ կրնայ Թեհրանի համար լաւ միջոցով մը ըլլալ Աֆղանիստանի հետ կապուած հարցերուն առնչութեամբ:

Թուրքմենիստան քաղաքային օրէն կրճատած է արտաքին աշխարհին հետ իր յարաբերութիւնները: Անկախ կապ կը հաստատուէ միայն Ռուսիոյ եւ Իրանի հետ եւ այս վերջինն է, որ հետաքրքրուած է եւ կարողութիւնը ունի զարգացնելու այդ գործակցութիւնը: Գետնաբար Իրանն է, որ ամենէն մեծ ազդեցութիւնը կրնայ ունենալ Կեդրոնական Ասիոյ այդ հեռու, բայց արժեքաւոր անկունին վրայ:

(ՍԹԵՐԹՖՈՐ)

Ո՞Ր ԵՐԿԻՐԸ ԲՆԱԿԱՆ ԿԱԶ ՊԻՏԻ ՀԱՅԹԱՅԹԷ ԵՒՐՈՊԱՅԻ

8 Յունիս 2000ին Եւրոպական Միութիւնը հրապարակեց ծրագիրներ, որոնց համաձայն, 10 Օգոստոսէն սկսեալ բնական կազի ներքին շուկային 20 ա հարիւր պիտի ազատակցուի: Ասիկա միջազգային միջոց մըն է ուժանիւթի առանձին շուկայի հաստատման ուղղութեամբ:

Եթէ այս ծրագիրը յաջողի, այս շուկային պատճառով տեղի պիտի ունենայ գիներու անկում, եւ նոր երկիրներ ու ընկերութիւններ հետզհետէ մուտք պիտի գործեն շուկայ:

Կարճ ժամանակամիջոցին այս փոփոխութիւնները կրնան նպաստել Եւրոպայի եւ կազ արտադրող այն երկիրներու միջեւ յարաբերութիւններու բարելաման, որոնցմէ նախապէս կը զգուշացուէր, ինչպէս՝ Իրանն եւ Լիպիա: Սակայն երկար ժամանակամիջոցի վրայ

կախեալ են Ռուսիոյ բնական կազէն: Եւրոպա սահմանափակ կարելիութիւններու դիմաց կը գտնուի: Յետեւեալ ներածման համար Եւրոպայ կրնայ դիմել Ալճերիոյ, ինչպէս նաեւ՝ Նիժերիոյ եւ Միջին Արեւելքի հեղուկացած բնական կազի աղբիւրներուն, որոնք նախապէս նուազ չափով օգտագործուած էին:

Եւրոպայն նաեւ կրնայ կազի անմիջական նոր շուկաներ հաստատել հեղուկացած կազի ներածման համար: Այսպիսի շուկաներ կը նպաստեն մըրցակցութեան եւ գիներու անկման:

Բայց այս պարագային հայթայթողներու ապահովութիւնը կը վտանգուի, որովհետեւ անմիջական շուկաներուն վրայ կարճ առումով պայմանագրութիւններ կը ստորագրուին: Այսպիսի քաղաքականութիւն մը մասնաւորապէս

ԿԱՐԵՒՐ ՀԱՅԹԱՅԹՈՂՆԵՐ (ՄԻԼԻԱՌ ԽՈՐԱՆԱՐԴ ՄԵԹՐ)			
ՀԱՅԹԱՅԹՈՂ	ՊԱՇՏԱՆԵՐ	ՆԵՐԿԱՅ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆ	ՆԵՐԿԱՅ ԱՐՏԱԾՈՒՄ
Լիպիա	1300	6,5	1,1
Նիժերիա	3500	5,5	0
Սէուտական Արաբիա	5800	47	0
Իրան	23000	54	2,8
Ղազախստան	1500-2300	7	-0,8
Ուզպեքիստան	2100-2500	56	15
Թուրքմենիստան	2900	25	21

այս ծրագիրը կրնայ վտանգել թէ՛ հայթայթող երկրային ամենամեծ ընկերութեան՝ «Կազփրոմ»-ի եկամուտները եւ թէ ռուսական կառավարութեան զանձած հարկերու եկամուտը:

Եւրոպական Միութեան ուժանիւթի քաղաքականութիւնը կը հիմնուի երեք գլխաւոր սկզբունքներու վրայ. յաւելեալ մրցակցութիւն, կենսալոյտի պաշտպանութիւն եւ մատակարարման ապահովութիւն:

Այս նպատակներուն առաջին երկուքը իրականացնելու համար պէտք է ընտրել կազը եւ ոչ թէ քարիւղը կամ ածուխը: Եթէ ուժանիւթի ազատ շուկայ

պէս Ռուսիոյ կազի մեծաշնորհը ունեցող «Կազփրոմ» ընկերութեան համար նախընտրելի է:

Սակայն հեղուկացած նիւթերը շատ սուղ կ'արժեն: Հետեւաբար Եւրոպա պէտք է գտնէ այլ նիւթեր, որոնք կրնան ներածուիլ խողովակներու միջոցով:

Լիպիա նկատուելի ներուժ ունի: Բայց լիպիական խողովակներու գծով անկախելի է ծրագիրներ իրականացնել միջին եւ «Լեքքրայի» դատը վերջ գտնէ:

Ամենէն յուսալից աղբիւրը կրնայ Իրանը ըլլալ: Ենթակառոյցին մեծ մասը արդէն իսկ պատրաստ է: Կը մնայ

հաստատուի, բնական կազի փոխադրումը կրնայ տեղի ունենալ կազատարներու ցանցերու միջոցով, ուր որ պէտք ըլլայ:

Երբ Եւրոպական Միութիւնը իր կազի շուկային չ'ենթարկէ ազգային մեծ ցրուիչները, գիները զգալիօրէն պիտի իյնան: Նմանօրինակ դրուիւն գոյութիւն ունի Մեծ Բրիտանիոյ մէջ, ուր կազը հետզհետէ աւելի աճան կը դառնայ, քան ցամաքամասի այլ շրջաններուն մէջ:

Ինչ կը վերաբերի կենսալոյտի պաշտպանութեան, բնական կազը նուազ չափով ապակողմ ճիւղեր եւ շերտանոցի կազը կ'արտադրէ քան աւելի աւանդական վառելանիւթեր, ինչպէս՝ քարիւղ կամ քարածուխը: Հետեւաբար է. Միութիւնը աւելի եւս կախեալ պիտի ըլլայ կազէն: Ըստ Միացեալ

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ

ՇԱՄԱՆ ԵՒ ՀՈԳԵԲԱՆ

Նէս Մաունթըն ամերիկացի հոգեբան մըն է, որ իր կիրարկումին մէջ կը միացնէ հոգեբանութեան գիտութիւնը եւ ոգեկանութեան երևոյթներու հասկացողութիւնը: Անիկա հոգեբան ըլլալու կողքին, նաեւ շաման է, եւ կը հաւատայ, որ «հոգեբանութիւնը պէտք է ուղղակիօրէն աշխատի անհատի մը կեանքի սկզբունքին հետ, որ առաջին հերթին կը նշանակէ շունչ եւ կապուած է մեզի շունչ տուող իրականութեան»: «Այս եւ անցնող դարաշրջանին ընթացքին տեղի ունեցած փոփոխութիւնները յանգեցան մեր կեանքներուն մէջ իմաստի կորուստին, որովհետեւ իմաստի ասանդակն աղբիւրները անհետացան», կը գրէ Մաունթըն:

Հին մշակոյթներէ մեզի հասած գաղափարները եւ վերջին դարերուն ընթացքին ծնած հարցումները կարելի չէ ջնջել: Բազմաթիւ անհատներ այսօր կը նախընտրեն իրենց յատուկ բացատրութիւններ որոնք իրենց ոգեկանութեան եւ հաւատքի իմաստով, թէեւ գլխաւոր ասանդակն կրօնները տակաւին կը գոյատևեն: Այս պատճառով մարդկային ընկերութիւնը այսօր կարիքը ունի վերանայելու ոգեկանութեան հասկացողութեան եւ գայն ընդունելու իրեն իր առօրեայ կեանքին անբաժան մասնիկ:

Հոգեբանութիւնը, ինչպէս եզրը ցոյց կու տայ, հոգիի գիտութիւնն է: Այդպէս է նաեւ լատինական լեզուներուն մէջ, ուր հոգեբանութիւն բառին լեզուաբանական արմատները կ'ընդգծեն, որ այդ գիտութիւնը հոգիի խնամքին կը ծառայէ: Սակայն կը թուի, որ դարերու ընթացքին արհեստագիտութեան

զարգացումին պատճառով մարդկային ընկերութիւնը առաջնահերթութիւնը տուած է միտքին՝ ի վնաս հոգիին: Այդպէս է, որ այսօր հոգեբանութիւնը ընդհանրապէս կը գրադի «հոգեմտաւոր խանգարումներ»ով եւ մարդկային ոգեկան տարրողութիւնը կը ձգէ այսպէս կոչուած «բնագանգական» գիտութիւններուն:

Այս իրողութեան անդրադառնալով է, որ Նէս Մաունթըն իր հոգեբանական մասնագիտութեան միացուցած է շամանիզմը, հատկապէս, որ հոգեբանները պէտք է տեսնեն նաեւ մարդուն ոգեկան տարրողութիւնը: Այս ուղղութիւնը արդէն իսկ բաւական տարածում գտած է Եւրոպայի եւ Միացեալ Նահանգներու մէջ, ուր հետզհետէ կը բազմանան հոգեբանական ոչ ասանդակն դպրոցները, որոնք կը ներգրտեն մեծ թիւով մասնագէտներ եւ այլ անհատներ:

Ստորեւ կը ներկայացնենք հատուածներ՝ Նէս Մաունթընի մէկ յօդուածէն, ուր ան կը մանրամասնէ ոգեկանութեան վերաբերեալ իր կարծիքները, ինչպէս նաեւ հոգեբանութեան մարզին մէջ այդ տարրողութեան ներառումին անհրաժեշտութեան գծով իր մտածումները: Կու տանք նաեւ նոյն հեղինակէն երկու յօդուածներ, որոնք կը վերլուծեն առօրեայ կեանքէն առնուած դէպքեր՝ հասնելով մարդկային ընկերութեան մէջ հաստատուած իրականութիւններու ընդգծումին: Վերջին երկու յօդուածները հիմնականօրէն կը վերաբերին Միացեալ Նահանգներուն, սակայն այնտեղ կատարուած նշումները կիրարկելի են ներկայ դարաշրջանը ապրող մարդկային որեւէ խմբաւորումի:

ՈԳԵԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆԵՒԻ ԼՈՅՆ ԲԱԺԱՆՈՒՄ

Ոգեկան փորձառութեան անեւի Լոյն բաժանում մըն է այն, ինչ որ եւ կը կոչեն կեանքին բացուիլ: Յաճախ, հոգեբանական նիւտրոն ընթացքին, ինքզինքն կը դնեն հոգեկան իրավիճակի մը մէջ, ուր հոգիս ազատ կը ձգեմ աշխարհէն ստանալու իմաստ մը կամ ուղղութիւն մը՝ անհատի մը օգնելու համար: Այդ մէկը կը պատահի նաեւ խոկունի կեանքի ընթացքին, երբ կը բանամ հոգիս եւ կ'արտօնեմ, որ ոգեկան ուժը իսպի մէջս: Երբ այս կ'ընեմ, ինքզինքս փոխուած կը զգամ՝ եւ որոշ ժամանակ ետք կը յաջողիմ այդ փոփոխութիւնը ներառելու առօրեայ կեանքիս մէջ:

... Հոգեբանութեան մէջ մենք կ'աշխատենք նման փորձառութիւններու եւ զգացումներու հետ. կեանքի սկզբունքին կեանքի հետ եւ այդպէս է. որ տեղի կ'ունենան իսկական փոփոխութիւններ. կը հաւատամ, որ այս մէկը նաեւ ոգեկանութիւնն է: Մենք մեզ ուրախ կը զգանք. մեր միտքը, մարմինը եւ ինքնութիւնը՝ լեցուն: Այդ պահուն է. որ կը պատահի խորունկ փոփոխութիւնները, որոնք ըստ էութեան միշտ ալ կապուած են հոգիին:

Կը հաւատամ նաեւ, ինչպէս զանազան տեսութիւններ կ'ըսեն. որ խոր փոփոխութիւնները յաճախ կը ներգրաւեն նաեւ մարմինը բազմաթիւ ծեւերով: Յուզումները եւ յուշերը մարմինն մէջ են: Հետեւաբար սխալ է ոգեկանութիւնը հակադրել ֆիզիքականին:

... Կը թուի, որ անցնող հարիւր տարուան ընթացքին արմատական փոփոխութիւն մը յառաջացած է միտքի եւ դարմանումի վերաբերեալ մեր մօտեցումին մէջ: Մենք բաժանում մը ստեղծած ենք միտքին եւ հոգիին միջեւ եւ այլեւս հոգին դարմանելու մասին չենք խօսիր, նոյնիսկ երբ իսպառ հոգեբանութեան կը վերաբերին:

Երբեւ հոգեբան իմ աշխատանքիս ընթացքին եւ կը փորձեմ բուժել անհատը եւ ոչ՝ «հոգեբանական կամ մտային խանգարում» մը: Առանց անույժամօրէն «խանգարում» ըլլալու, մենք բոլորս ունինք հոգեկան վերքեր, որոք իմ մտքի կը կարօտին: Հետեւաբար հոգեբանները պէտք է հարց տան՝ հարցեր կը դարմանենք, թէ անհատներ, հոգիներ:

... Եթէ նկատի ունենանք, որ ոգեկանութիւնը բոլոր անհատներու կողմէ ապրուած իրականութիւն մըն է (որ կեանական է մեր էութեան համար եւ որ կը պայմանաւորէ բոլոր խորունկ փոփոխութիւնները), ուրեմն անիկա պէտք է մաս կազմէ հոգեբանութեան գործընթացին: Մենք կ'ապրինք դարաշրջան մը, ուր տիրող քաղաքականութիւնը առաւել կամ նուազ չափով հետեւողականօրէն կ'արգելակէ հոգիներու դարմանումը: Այս պատճառով հոգեբանները թէ անոնց դիմող անհատներ կարիքը ունին յաւելեալ տեղեկութիւններու՝ ոգեկանութեան եւ հոգիի դարմանումին մասին: Հետեւաբար հոգեբանները նախ պէտք է հասկնան իրենց սեփական ոգեկան տարրողութիւնը, որպէսզի կարենան օժանդակել տագնապող անհատներուն: Անոնք պէտք է պատրաստ ըլլան մեկնաբանութիւններու եւ հարցումներու, որոնք իրենց դիմող անհատը կ'ուղղեն դեպի սեփական իմաստի որոնում:

ՆԱԿ ԵՒ ԹՄՈՒԷ

Գնդակը ինձի հասաւ երկու քրտնած իսղացողներու ընդմէջէն: Խմբակիցս վերջապէս ինքզինք գտած էր կացութեան մը մէջ, ուր իր միակ կարելիութիւնը գնդակը ինձի անցնելն էր: Գնդակը բաւական անձնօք կը թուէր ինձի, որովհետեւ տեսնելու ընթացքին անիկա գրեթէ ձեռքս չէր անցած: Վաղեցի դեպի կողովը եւ նետեցի գնդակը. միեւնոյն տեսնելու յոյսի բազմաթիւ ծայրեր, որոնք «սխալ» կը գոռային: Ընկալման զգացումը ծանօթ էր: Միեւնոյն դեպի հակառակ կողմ կը վազէիք. մրցակից ինքնուրէն մէկը անհանդիս ծամառութեան մը ըրաւ իմ հասցէիս. ան գլուխը, որ իմ իսղացողներէս ոչ մէկը պիտի ուզէր անգամ մը եւս վերադառնալ ինձի տալ. սխալ տեսնողները նոյնպէս պիտի չուզէին մաս կազմել այն խումբին, որուն անդամ էի եւ: Մրցակիցս այս բոլորը գլուխը եւ ըստ երեւոյթին կ'ուրախանար:

Կրնայի նոյն պահին դուրս գալ իսղացող, սակայն շարժիլ չէի կրնար եւ մնացի մինչեւ իսղացողը աւարտը: Տխուր, առանձին եւ իստառակաւ կը զգայի, սակայն կը մերժէի՝ ամչնալ: Խաղին սկզբնականութեան արդէն իսկ զիս մտաւ: Նուազեմ էի իբրեւ «տկար» եւ այդ մէկը իր ժխտական ազդեցութիւնը ունեցած էր վրաս: Արդե՞ք այդ իրողութիւնը զիս վատ անձի կամ անկարող մարդիկի մը կը վերածէր: Կը մտածէի, որ ոչ. եւ շատ անեւի լաւ արդիւնք կու տայի երբ ընկերային եւ դրական մօտեցում ունեցող մարդոց հետ կը իսղայի:

Երբ ուրիշներու կը խօսիմ այս փորձառութեան մասին, ընդհանրապէս երկու պատասխան կը ստանամ: Ոմանք կը համարեն ինձի եւ որոշ չափով կը զարմանան միւս իսղացողներուն անբարեացակամութեան. անոնք նոյնիսկ կը իրատեսնէ իր հետ: Ուրիշներ, ընդհանրապէս տղամարդիկ, չեն հասկնար. թէ ինչու՞ այդքան կը նեղանամ. «Անշուշտ դժուար է. բայց իսղը այս է, կը վարժուիս»:

Ոչ մէկը կ'ուզէ իսկապէս խօսիլ այս մասին. իրականութեան մէջ, այս նիւթը բայց է:

Նոյն օրը, անեւի կանուխ, փորձեցի փոխել տալ այն կանոնը, ըստ որուն յաղթող իւրմը յաջող իսղացողին մասնակցելու իրաւունք կը ստանայ: Նոյն չորս իսղացողները արդէն իսկ չորս իսղ ունեցած էին, մինչ տասնեակ մը երիտասարդներ կը սպասէին իրենց հերթին եւ ոչ մէկ իսղի առիթ ունեցած էին տակաւին: Յաղթողները յոգնած էին, բայց միեւնոյն տեսնելով յարձակողական, փորձառու եւ բարձրահասակ:

«Ինչու՞ ուրիշները չեն հասկնար», հարցուցի յաղթական իմ բախիկն անուշադէպ զինուորիկին. «Քանի մը իսղ իսղացաւ եւ մեծ թիւով մարդիկ տակաւին կը սպասեն իսղալու համար»:

«Յաղթող իւրմը դաշտին վրայ կը մնայ», պատասխանեց ան, ըստ երեւոյթին զարմացած, որ չեմ հասկնար տիեզերական այդ պարզ օրէնքը. «Եթէ չմնայինք, ինչ նպատակ պիտի ունենայինք յաղթելու համար»: Այլ իսղացողի մը նաեւ հարցուցի այս մասին իր կարծիքը. «Միշտ այսպէս եղած է», ըսաւ ան, «այդպէս է օրէնքը» եւ հեռացաւ:

Յստակ էր, որ ամէն մարդ կ'ուզէր անփոփոխ կերպով հետեւիլ այդ օրէնքին: Կացութիւնը ինձի համար նշանակալից էր մանաւանդ այն պատճառով, որ այս մարդոցմէ ոչ մէկը միւսը կը հանչնար. անոնք անձնօրէն էին, տարբեր տարիքի եւ ազգի, որոնք այդ երեկոյ

իրար հանդիպած էին մարգաղաշ տին վրայ: Հակառակ այս «անձնօրէնութեան», անոնք բոլորն ալ համաձայն էին երեք օրէնքներու շուրջ

Ա) Սխալ գործող կամ տկար իսղացողները արտաքսել ընդունելի է:

Բ) Խաղը կառավարող «օրէնքները» անեւի կարեւոր են, քան՝ հանելի ժամանակ անցնելու փափաքը:

Գ) Վերոյիշեալ երկու օրէնքներուն մասին խօսիլը անելիք է:

... Այլ իսպով, զուարճանալը եւ զիրար քաջալերելը առաջնահերթութիւններ չեն: Յաղթանակը ամէն բան է: Եւ անշուշտ այդ մասին չի խօսուիր: Տրուած ըլլալով, որ այդ երեկոյ հաւաքուած մարդիկը որոշ միջավայրի կամ տարիքի չէին պատկաներ, կ'ենթադրեմ, որ նշեալ իրողութիւնները ընդհանուր են եւ ամէն տեղ կը կիրարկուին: Այս է մեր երկրին մշակոյթը:

Կը կարծեմ, որ այս մասին հարցումներու ստացած իուսափողական եւ լռեցնող պատասխանները մաս կը կազմեն այս «սովորութեան»: Գրեթէ բոլորս ալ ցաւած ենք մեր մանկութեան ընթացքին, երբ իսղը մը դուրս դուրս եւնք մեր ընկերներուն կողմէ: Միասին իսղալու մեր սովորութիւնները հաւաքական խոր ցաւի բեմ մը ստեղծած են, եւ մենք կը շարունակենք մասնակցիլ հերթումի գործընթացին, ծեւացնելով, որ այս կացութիւնը լուրջ հարց մը չէ:

Սակայն իսղալը անիմաստ բան մը չէ: Անիկա զուարճութեան եւ իմաստի կենսական աղբիւր է մանաւանդ երեխաներուն եւ պատանիներուն համար, եւ յաճախ նաեւ՝ չափահասներուն համար: Ինչու՞ միասին չենք կրնար ուրախանալ մեր կեանքին ընթացքին: Ի՞նչ կը կարծեք. պէտք չէ՞ խօսիլ այս մասին:

ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ԵՒ ՓՈՓՈՒՄՈՒԹԵԱՆ

Վերջին յիսուն տարիներուն ընթացքին համակարգիչներուն կարողութիւնը իւրաքանչիւր տարի կը կրկնապատկուի. անոնք այսօր մօտեցած են մարդկային ուղեղին: Բազմաթիւ պարագաներու մէջ այս իրողութեան արդիւնքին մասին կը խօսուի իբրեւ ինքնազգու՝ հեռաձայն, դրամատան քարտեր, ինքնուրուք... ինչպէս նաեւ 2000 բուսականի տագնապ եւ «Մայրքրտոսֆեր» ընկերութեան հարցեր:

Սակայն համակարգիչներու այս զարգացումով նոր բան մը կը պատահի. այդ փոփոխութիւնը սկսած է ժխտականօրէն ազդել նոյնիսկ դրական փոփոխութիւններու յարմարելու մեր կարողութեան վրայ եւ կը կարծեմ, որ այս իրողութիւնը հետագիտելի անեւի աչքառու պիտի դառնայ յաջորդ տասնամեակին ընթացքին:

Օրինակի համար. վերջերս գեցելի համակարգիչի ծրագիր մը, որուն շնորհիւ կրնամ գրելու փոխարէն թեւադուրս կատարել մեքենային. չեմ փափայիք, որ երեխան գործած այս ծրագիրը իր տեսիլին պարտականութիւնները կատարելու համար, որովհետեւ այսպէս ան ուղղագրութիւն պիտի չստուի: Սակայն գիտեմ, որ հոսանքին դեմ կը թիւալարեմ: Օտտիկապատկային, երեխաները այլեւս կարիքը պիտի չունենան ուղղագրութիւն սորվելու. որովհետեւ համակարգիչները պիտի գրեն իրենց փոխարէն՝ իրենց ծայրով կատարուած թելադրութեան հիման վրայ: Առողջագրութիւնը պիտի հետեւի մեծ թիւերով բազմապատկութեան. այսօր գրեթէ ոչ ոք մտքով կ'ընէ այդ հաշիւները. մեքենաները փոխարինած են մտքի գործունէութիւնը:

Միւս փոփոխութիւնը վերջին տարիներին է, նոյնիսկ եթէ դրական է. «լաւ» արհեստագիտութիւնը կրնայ սխալ գործածուիլ եւ աղետալի հետեւանքներ ունենալ (ինչպէս՝ հեռաձայնի ճանաչման հասակ նետող երեխաները): Եւ մենք հասած ենք այն կէտին, ուր արհեստագիտութիւնը հետզհետէ անեւի արագ եւ անեւի շատ կ'ազդէ մարդուն վրայ: Այս ժամանակաշրջանը իւրապատակաւ պիտի մեզի կը յիշեցնեն մանր. հետեւաբար փոփոխութեան հետ մեր յարաբերութիւնը մանուկ հետ մեր յարաբերութիւնն է: Մենք պէտք է բացուիք փոփոխութեան եւ մանաւանդ պէտք է այդ մէկը ընենք միասին իստիկ մեր փորձառութիւններուն, հարցերուն եւ ուրախութիւններուն մասին: Եթէ առանձին ըլլանք (իսկ արհեստագիտութիւնը կրնայ այդ կացութեան կրկնապատկել), չենք կրնար այս իրողութիւնը «վարելու» անհրաժեշտ շնորհը զարգացնել:

Թերեւս տասը կամ քսան տարի ետք, մենք ակնհայտապէս պիտի ըլլանք իսղացի համակարգիչներու ծնունդին: Ոչ ոք, ոչ նոյնիսկ «Մայրքրտոսֆեր» կրնայ առաջը առնել այս «խեղճ» վերելքին: Թերեւս չե՞ք գիտեր, թէ ուր կ'երբանք, բայց յստակ է, որ միասին պիտի երբանք, պատրաստուած կամ ոչ: Բոլորս իրարու ձեռք ունենանք. զիրար սիրենք. իրարու պէտք պիտի ունենանք:

Պարտապարտ
Թ. Ա.



GAS G. Ayanian & Sons
Dora, Tel: 255222/3/4/5/6 Cellular: (03) 627728/9
Gemayzeh, Tel: 447000 - 445429, Fax: (01) 265187 - 582357

